



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏՈՒՆՆԵՆ ԿՈՄԻՏԵ ԱՄԵՐԻԿԱ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԵՍՏ ԺԶ.

21 ՄԱՐՏ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category (պէյ, էֆէնտի), and Abbreviation (ա., բ., գ., ւ., թ., Գ.).

ՉԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ՆԱԽԱՉԵՌՆ ՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Table with 3 columns: Name, Category, and Abbreviation.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԶ.

21 ՄԱՐՏ 1875

ՆԱԽԱԳԱՂ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԱՏԵՆԱՊԵՏ. — ՌՈՒՄԻՆԵԱՆ ԷՖԷՆՏԻ

(Բ. Ատկնայետ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԻՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԻՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վ. ԻՃԱԿ)

ԳՈՒՃԱԿՈՒՄ, ԿԻՏԻԿ ՎԻՄԱՅ ևՆ ԳՈՒՃԱԿՈՒՄՆԻ ՊՈՒՐԱ

21. Բարձր Քիւրճիկայէան

Table with 2 columns: List of names and Abbreviations.

Table with 2 columns: List of names and Abbreviations.

(Բ. Վ. ԻՃԱԿ)

ՊԵՐՅԱԾՍԵՆ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

ԵՆԻՊԱՄԻՐ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

ԴՆԱԿԱՍԻՆԱՐ Ս. ԽՈՒՅ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

Table with 2 columns: List of names and Abbreviations.

(Գ. Վ. ԻՃԱԿ)

ԲՆԱՅ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

ԳԱՍՏՐ ՎԻՄԱՅ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

ՊԵՐՅԱԾՍԵՆ ևՆ ՂԱՐԱԾԻՄ

Table with 2 columns: List of names and Abbreviations.

Գատրգիրող

71. Կարապետ Շահապահան Բ. 2

72. Մկրտիչ Մուսահան Բ. 2

Նարչզգահող

73. Յակոբ Եմբիհիճեան

Երկրապարտի Մամաթիոյ

74. Օգսէն Խոճասարեան Բ. 2

Ժողովագիրող

75.

Էրոսայ Ս. Եղիս և Ս. Աստուածածին

76. Գարեգին Յ. Մեղիճեան

Գործողական

77. Ասափա Իկրապաչեան Բ.

Հիսար և Պոյաճի գիող

78.

Նոր գիող և Մթեհիս

79. Ղազար Հովհաննէս Բ.

Պարաւս

80. Մկրտիչ Գ. Էսաեան

81. Յովհաննէս Կրճիկեան

82.

Քարակիցիական

83. Յարութիւն Զէնճիրճեան Բ. 2

84. Յարութիւն Գ. Տատեան Բ. 2

(Ե. վիճակ)

Մամաթիոյ

85. Աւետիս Քոլոլեան

86. Եղիազար Մեղիճեան Բ. Պ

87. Յակոբ Քաղապահան Բ. 2

88. Նազարեթ Շահապահան Բ.

89. Նշան Օտեան ՀԲ.

90.

91.

92.

93.

94.

Խոստովող

95. Առաքել Ալթուն Տիւրբի

96. Խոստովող Պ. Միսաքեան Բ.

97. Ռեթեոս Պէլիկեան Բ.

98. Սարգիս Արապեան Բ.

99. Սիմոն Մեղարեան

100.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՑԱՆՔ

Կարիկ

101.

Ֆիւմիսիան

102. Մերսոյ Յ. Այվաթեան Բ. Պ

Արիստոպոլիս

103. Ռուբէն Կիւմիլիէրտեան Բ. 2

Նիկոմիդիա

104. Տիգրան Կիւմիլիէրտեան Բ. 2

Այն

105. Պետրոս Միսաքեան Բ.

Հարահիսար

106.

Արարիկ

107. Կարապետ Խաչիկեան

Բաղիշ

108.

Պրուսա

109. Բրիտանոս Գալարոսեան

Երողիս

110.

Ամասիա

111. Համբարձում Ալաճաճեան Բ.

Բաղոն

112. Յովհաննէս Ալաճաճեան Բ. 2

Երեւիս

113.

Մամաթիոյ

114.

Հանն

115.

Երզնկա և Յարկոյ

116.

Ժեռիդ

117. Տիգրան Գ. Սինեան

Կեսարիս

118. Մատթէոս Մ. Այվաթեան Բ. Պ

Խորհրդ

119. Յովհաննէս Երզնկեան

Պալքիս

120. Յովհաննէս Յովակիմեան

Մոսշ

121. Ստեփան Պ. Պ. Փափազեանց

Տիւրիկ

122. Պօղոս Ծովիկեան

Զիլիս և Մարաշ

123.

Տրասպոն

124. Մկրտիչ Կիւմիլիէրտեան

Պարաւս

125.

Տիւրքիստան

126. Թադէոս Թէրեան

Վան

127. Սիմոն Մաքսուտեան Բ.

Այլաթի

128.

Հայկոյ և Այլաթի

129.

Սեբաստիա

130.

Սոսանո

131.

Կարս

132. Արսէն Գ. Այվաթեան

Չիլիս

133. Համբարձում Սարգիսեան Բ.

Գարաիս

134.

Ասահ

135. Սիմոն Պ. Նորատունկեան Բ.

Սըրիս

136. Մատթէոս Ալաճաճեան

Խոզան

137.

Մարաթիս

138.

Իզմիր


139.

Երզնկա

140.

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ժրագիր ազգային տրոց :
Բ. Կառնաճոց դիմանի Տեղեկագիրն ազգային վանորից համարառոթեանը վերաբերեալ :
Գ. Փոփոխի տրամադրութիւնը Մահմաճարութեան. — վերաբնի Յաննաճոցոյ ծրագիրը :



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

3.

Ատեանը բացուեցաւ ճիշդ ժամին 7 ին ի ներկայութեան 38 երեսփոխանաց , որոց վերջին թիւը 45 ի հասաւ :

X.

Ատենապետ էֆէնտին նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ի զիտողութիւն հրահրեց երեսփոխանները . սակայն զիտողութիւն ընող չըլլալով , քուէի զրուեցաւ եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ :

2.

Ատենապետ էֆէնտին՝ անձնական տկարութեան պատճառաւ այսօրուան նիստին բացակայ մնալու ստիպեալ քանի մը երեսփոխանաց անունները ծանոց ժողովին , որք են .

- Տ. Կարապետ Վարդ . Սերոբեան
- Եղիազար էֆ . Մելիքեան
- Մերսոյ » Այվաթեան
- Գրիգոր » Պէրպէրեան

Ատենապետ էֆէնտին՝ Պէլիկեան Ստեփան էֆէնտին նամակն ալ ներկայաց ժողովին , որով կը յայտնէ թէ ազգային զբաղմանց պատճառաւ բացակայ մնալու ստիպուած է :

Ատենապետ էֆէնտին յայտարարեց թէ ասի ըստ կանոնագրութեան առանց բանաւոր պատճառի բացակայ պիտի նշանակուի :

Հրատարակում

Ատենապետ էֆէնտին ծանոց թէ Սարապեան Ալիքսան էֆէնտին անձնական տկարութեան եւ օգտօրէնութեան պատճառաւ մայրաքաղաքէս մեկնելու զիտողութեան մէջ ըլլալուն համար հրաժարական զրկած է , եւ յաւելցնելով թէ այս հրաժարականին վրայ զիտողութիւն մ'ընելու երբէք տեղի չկայ , քուէի զրու զայն , եւ ժողովը միաձայնութեամբ ընդունուեցաւ :

Ատենապետ էֆէնտին նաեւ Օտեան Նշան էֆէնտին եկած նամակը ներկայաց ժողովին , որով կը յայտնէր թէ այսօր եւս չէ կարող ներկայ գտնուիլ Ազգային ժողովին , եւ թէ բացակայութեան պատճառը միեւնոյնն է , ուստի եւ ժողովին ներողամտութիւնը կը խնդրէ :

Ատենապետ էֆէնտին յաւելցուց թէ . բացակայութեան պատճառին համար միեւնոյնն է ըսածը՝ անձնական զբաղմունքն է ըսելի՛լու չէ , ինչպէս որ յայտնած էր ասկէ յառաջ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Անձնական զբաղմունքն օրինական պատճառ մը չէ . միայն հիւանդութեան եւ ճամբորդութեան եւ հրդեհի պատճառներն են օրինական : ժողովն Օտեան Նշան էֆէնտին ներողամտ կ'ըլլայ թէ ոչ՝ այն չեմ գիտեր . սակայն իմ պարտքս է ըսել թէ ժողովը բացակայութեան համար բանաւոր պատճառներն արդէն որոշած է իր կանոնագրութեան մէջ :

ԱՏԵՆԱԿՅՏ ԷՖ. — Պարտ կը համարիմ չիչեցնել թէ Օտեան Նշան էֆէնտին ասկէ առաջ հրաժարեցաւ իւր անձնական զբաղմանց պատ-

ճառաւ, եւ յիրաւի իւր դբադմունքը ծանր են. բայց ժողովն ի նկատի չառաւ եւ մերժեց անոր հրաժարականը. կրնայ երբէք ի նկատի չառնուիլ եւ չընդունել նորա հրաժարը. սակայն նա ալ կրնայ երբէք չը ներկայանալ ժողովին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եթէ անձնական գրադմունքը պատճառ ցոյց պիտի տրուի ժողովին նիստերուն ներկայ չգտնուելու, շատերը կրնան այդ պատճառաւ բացակայ մնալ ժողովոյ նիստերէն, եւ այն ատեն միթէ հնարաւոր բան է օրինական կամ իսկական մեծամասնութիւն գտնել: Ամենքնիս ալ ունինք անձնական գրադմունք. ուստի կ'առաջարկեմ ըստ օրինի հրաժարեալ համարել. ժողովոյն հարցնելու անգամ հարկ չկայ. պէտք է օրէնքը գործադրել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն կանոնադրութեան մէջ ցուցուած եւ օրէնքի կարգ անցած են այն պատճառներն՝ որով երեսփոխանի մը ներեալ է բացակայ մնալ ժողովոյ նիստերէն. իսկ այդ օրինական պատճառներէն զուրս եղածներն ընդունելի չեն կրնար ըլլալ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Քրիստոստուր էֆէնտիին համամիտ եմ եւ կը ձայնակցիմ. եթէ անձնական գրադմունքը բանաւոր պատճառ համարել սկսինք, ան ատեն բացակայից թիւը կը շատնայ եւ չեմ կարծեր որ անկէ ետքը հրնարաւոր ըլլայ առջեւն տանուլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք է գիտնալ թէ Օտեան նշան էֆէնտիին իւր նամակին մէջ այս անգամ ալ հրաժարականի խօսք չընէր, բայց կը յայտնէ թէ իւր բացակայութեան պատճառը նոյնն է. ուստի եւ ներողամտութիւն կը խնդրէ:

Տ. ԱՄԱՐԻՆՈՍ Վ. — Օտեան նշան էֆէնտիին կը փափաքի իւր ստանձնած պաշտօնը կատարել, բայց իւր անձնական գրադմունքն արդելք եղած են ժողովին նիստերուն ներկայ գտնուելու: Ըստ իս՝ ժողովն աւելի լաւ կ'ընէ այսպիսի պարագայի մը մէջ նորա հրաժարականն ընդունիլ. վասն զի եթէ չընդունի պիտի հարկադրէ զինքը պարտադանցութեան մէջ գտնուելու, եւ ժողովն իւր որոշմամբ ինքն ալ պարտադանցութեան մէջ գտնուած պիտի ըլլայ:

ԵԷՄԷՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կանոնադրութեան 110-րդ յօդուածը կ'ըսէ. « Հրաժարեալ կը համարուի այն երեսփոխանն՝ որ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդ նիստերու բա-

« ցակայ մնալով, երրորդին անձամբ չպատասխանէ նախադանական յատուկ կոչմանը »: Սոյն յօդուածը կարծեմ կը լուծէ այս խնդիրը եւ վէճն երկարաձգելու հարկ չթողուր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ յայտնի է. բայց ժողովը՝ արդէն ձեռքն ունենալով այդ օրէնքը չէ ուզած ընդունիլ ասկէ առաջ Օտեան էֆէնտիի հրաժարականը, եւ չը գիտեմ ինչ գիտաւորութեամբ:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ գրուի Օտեան էֆէնտիին թէ իւր յառաջ բերած անձնական գրադման պատճառը չընդունուիր. եւ թէ՛ պէտք է որ ժողովոյ նիստերուն ներկայ գտնուի, չէ նէ հրաժարեալ պիտի համարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օտեան նշան էֆէնտիին Ք. բացակայութիւնն ունեցած է այսօր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն հրաժարեալ կը համարուի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եթէ Բ. բացակայութեանն էտեւ ազդարարութեան նամակ գրուած է, աւելորդ է նորէն ազդարարութիւն ընել. այլ ըստ օրինի հրաժարեալ պէտք է համարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկրորդ բացակայութեանն էտեւ օրինական ազդարարութիւնն եղած է. եւ այս ազդարարութիւնն ընդունելուն ստորագրութիւնն ալ իրմէ առնուած է, ուստի ինչպէս կանխաւ ըսի, նորէն կ'ըսեմ թէ Օտեան նշան էֆէնտիին այս անգամի բացակայութիւնն երրորդ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ըստ օրինի հրաժարեալ կը համարուի Օտեան նշան էֆէնտիին, այնպէս որ քուէի դնելու ալ հարկ չը կայ:

Վ. Ե. Ե. Ե. Ե.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն ստիպուած է ցաւալի լուր մը հաղորդել ժողովին. Ազգին ձեռագոյն եւ աշխատաւոր բարձրաստիճան եկեղեցականներէն եւ ժողովիս անդամներէն Տ. Թաղէոս Սրբազան Արքեպիսկոպոս վախճանած է. կսկիծանօք կը գուժեմ այս կորուստը, որոյ վրայ անշուշտ բոլոր երեսփոխանք մըլ տակից են ընդ մեզ: Երեսփոխանական աթոռ մը թափուր կը մնայ, եւ արդէն երկու եկեղեցական հարք հրաժարմամբ պակասած ըլլալով եկեղեցական երեսփոխանաց պակասն երեքի հասած է:

Պատմական... Ազգ. Ժողովոյ... Վ. Ե. Ե. Ե. Ե.

Ատենապետ էֆէնտիին ժողովոյն ներկայեց Զեւնահատութեան եւ Իրաւասութեան միացեալ դիւանաց խորհրդակցութեամբը եւ Խմբագրութեան դիւանին քննութեամբը պատրաստուած Ազգ. ժողովէն առ Վեհափառ Հայրապետն ուղղելի պատասխանագիրը, որ կարգացուեցաւ:

Ատենապետ էֆէնտիին յաւելցուց թէ սոյն պատասխանագիրը ժողովոյ ԺԱ. (20 դեկտեմբեր 1875) նիստին որոշմանը համեմատ խըմբագրուած եւ Նախաքննիչ դիւաններէն դալէ ետեւ՝ Ամեն Սրբազան Պատրիարք Չօր եւ ժողովոյս Ատենապետ Տատեան պէյին գիտողութեանն ալ յանձնուած եւ երբէք գիտողութիւն մը չունենանինն ստուգուած ըլլալով, կը մնայ ժողովին ընդունելութեան. որպէս զի Նախագահ Սրբազանը եւ Դիւանին անդամներն ի դիմաց ժողովոյն ստորագրելէ ետեւ զրկուի առ Վեհափառ Հայրապետն:

Ժողովն առանց գիտողութեան ընդունեց առ Վեհափառ Հայրապետն յղելի սոյն պատասխանագիրը, որ եւ ստորագրուեցաւ Նախագահ Սրբազանէն եւ Դիւանին երկու անդամներէն. ահաւասիկ պատճէնը:

Աստուածարեալ մեծի Եպիսկոպոսապետիդ եւ ծայրագոյն Պատրիարքիդ համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, արժանաժառանգ Աթոռակալիդ սրբոց առաքելոցն Թաղէոսի եւ Բարթողիմէոսի եւ Չօրն հաւատոց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, Տ. Տ. Գ. Ե. Ս. Ս. Ս. ընդհանրական կաթողիկոսի աւանանայն Հայոց շնորհաձիր սրբոյ Աջոյն համբոյր օրդիական:

Վեհափառ Քահանայապետ
եւ Տէր Հոգևոր.

Կոնդակ Հայրապետութեան մեծի եւ առաքելաշնորհ Հօրդ մերոյ, թուագրեալ 208 համարաւ եւ տուեալ ի 28 սպրիլի 1872 ամի, ընթերցաւ ի 26 մայիսի այնր

տարւոյ յատենի Ազգային ժողովոյս Հայոց Տաճկաստանեայց:

Ազգային ժողովս ի քարուք խելամուծութիւն առաջարկութեանց պարունակելոց ի կոնդակի անդ Վեհափառութեան Չերոյ և ի քննել զամենայն անցս որ ի ժամանակն յայնոսիկ անցին, կարգեաց ժողով Մասնական: Սակայն որ ինչ այնուհետեւ դէպք ազգայինք ի մայրաքաղաքիս պատահեալք չեն զանխուլ յիմաստութենէ ձերմէ, որք և պատճառս ետուն յապաղման տեղեկագրի Մասնական ժողովոյն, ուստի և սրատասխանոյ կոնդակի վեհափառութեանդ:

Ապա ի խաղաղել ամենայնի Տեառն օգնականութեամբ, վերստին առաւ ինը կատի առաջարկութիւն կոնդակի վեհափառութեան Չերոյ ի նիստ Ազգային ժողովոյս որ յ8 նոյեմբերի 1874 ամին, և տեղեկագրին զոր Մասնական ժողովոյն մատուցեալ էր կանխաւ յատեան մեծի ժողովոյս՝ յղեցաւ ի դիւան Նախաքննութեան. յորմէ վերստին յատեան ժողովոյս տեղեկագրեալ՝ եզրակացութիւն Նախաքննիչ դիւանացն ընկալեալ եղև յատենի մեծի ժողովոյս ի 20 դեկտեմբերի, որպէս է տեսանել ի տպագրեալ ատենագրութիւնս անդ Ազգային ժողովոյս:

Արդ ըստ եզրակացութեան այնր տեղեկագրի փութամբ նախ յայտ առնել խոնարհաբար առ Վեհափառութիւն Չեր, թէ

Ա. Ազգային ժողովս Հայոց Տաճկաստանեայց ի հաւանել անդ իւրում ընդ գաւառական ընտրութիւն կաթողիկոսին Արսոյ՝ չնկրտէր ամենեւին եղծանել զվաղընչուց սովորութիւնս Ազգին և անցանել ըստ սահման իրաւասութեան Հայրապետութեանն ամենայն Հայոց:

Բ. Քանզի յաւուրց անտի ժամանելոյ կոնդակի վեհափառութեան Չերոյ և այսր՝ բազում ժամանակք անցեալ են և

խնդրոյն չենք հասնիր. եւ եթէ կարենանք աւ հասնիլ՝ չենք կրնար զանի այսօր լմնցնել, ուստի ետ ձգած կ'ըլլանք:

Ատենապետ էֆէնտին քուէի զրաւ, եւ ժողովն 7 ձայնի դէմ 21 ձայնով ՈՐՈՇԵՑ տեղեկագրոց ընթերցումը ետ ձգել եւ անմիջապէս Օրակարգին անցնիլ:

Ատենապետ էֆէնտին յիշեալ տեղեկագիրները թուեց մի առ մի յետագայ կարգաւ:

1. Տեղեկագիր Նախաձեռնութեան գիււանի ի վերայ առաջարկութեանց Մարգարեան, Կրճիկեան, Իփէկճեան եւ Իւթիւճեան եւայլ էֆէնտիններու: — Տեղեկագրեր՝ Ռուսիսեան էֆէնտի:

2. Տեղեկագիր Իրաւասութեան գիււանի ի վերայ Այվատեան Մատթէոս էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագրի: — Տեղեկագրեր՝ Տ. Մատթէոս վարդապետ:

3. Տեղեկագիր Գարաբերութեան գիււանի ի վերայ աղերսագրի Տ. Գարեգին Վ. Սրուանձտեանց: — Տեղեկագրեր՝ Ալաճաճեան էֆէնտի:

4. Տեղեկագիր Դաստիարակութեան եւ Կալուածոց միացեալ գիււանաց ի վերայ Մուրատեան վարժարանին փարիզու: — Տեղեկագրեր՝ Ղազարոսեան Գ. էֆէնտի:

5. Տեղեկագրութիւն Նախաձեռնութեան գիււանի Տեղեկագրեր էֆէնտիի ի վերայ տեղեկագրի նոյն գիււանի եւ ծրագրի Վերաքննիչ յանձնաժողովոյ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ա. ՅՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՈՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ հասանք Օրակարգին, որ է Յրաճիւղ քուէի քուէի: Ինչպէս գիտե՞ք, նախընթաց նիստին Տրոց ծրագրին ընդհանրութեան վրայ վիճաբանութիւնը փակուելով, յօդուածոց վիճաբանութիւնն այսօրուան մնաց. ուստի Համարակալութեան գիււանին բերած ծրագիրը յօդուած առ յօդուած պիտի կարդացուի. ով որ յօդուածներէն մէկը կամ միւսը բարեփոխելու պէտք կ'ըզայ, կը հրաւիրեմ կանխաւ իւր առաջարկութիւնը գրով

մատուցանել Գիււանին, Կանոնադրութիւնը կը տրամադրէ որ այսպիսի առաջարկութիւնք կանխաւ հաղորդուած ըլլան. վասն զի մեր ժողովները ամենօրեայ նիստեր չունին, եթէ ունենային հող չէր. բայց քանի որ 15 օրն անգամ մը կը գումարուինք՝ կարելի չէ 15 օր ետ ձգել. վասնորոյ կ'ազայեմ որ բարեփոխութեան առաջարկութիւն ունեցողները կամ Մ. Գիււանին եւ կամ Համարակալութեան գիււանին կանխաւ հաղորդել բարեհաճին:

Իօսքն Ատենապետի էֆէնտիին է:

Ատենապետ էֆէնտին սկսաւ ծրագրին մէջ մի յօդուածը կարդալ:

Յօդուած 1

« Ամեն ազգային անհատ որ չտիրահաս է « եւ վաստակի ու շահու տէր եւ իւր բնակութիւնը Պօլիս հաստատած, պարտական է « Կեդրոնական անտուկին տարեկան տուրք մը « տալու »:

Ատենապետ էֆէնտին յայտարարեց թէ սոյն յօդուածը վիճաբանութեան դնելու հարկ չըկայ, որովհետեւ նոյն իսկ Սահմանադրութեան ազգային Տրոց գլխոյն յօդուածն է:

Հետեւապէս սոյն յօդուածն անխօսիս ՇՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ:

Յօդուած 2

« Ազգային տուրքն ու թ աստիճանի բաժնուած է. — 25. Բ. 50. Գ. 75. Դ. 100. Ե. « 150. Զ. 200. Է. 300. Ը. ըստ հաճոյից »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն յօդուածին վրայ եթէ զիտողութիւն ունեցող չըկայ, խօսքը Համարակալութեան գիււանին տեղեկագրեր Եւասուֆեան էֆէնտիին է:

ԵՆԻՍՈՒՅՑԵԱՆ Տ. ԷՖ. — Տրոց աստիճանացոյցին վրայ նախընթաց նիստին բաւական խօսք ըլլալէն ետեւ, Քաղաքական ժողովոյ տեղեկագրեր Կոստանդ էֆէնտիին հետ համաձայնեցանք, եւ կ'առաջարկենք որ աստիճաններուն թիւը եւ գումարները նոյն պահելով բարեփոխուի սապէս:

Ա.	աստիճան	500 զր.	սրոյնեալ եւ աւելորդն իբրեւ նուէր:
Բ.	»	300 »	
Գ.	»	200 »	
Դ.	»	150 »	

Ե.	զրուչ	100 աստիճան	
Զ.	»	75 »	
Է.	»	50 »	
Ը.	»	25 »	

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսել է որ Համարակալութեան գիււանն ու Քաղաքական ժողովը միանալով այս բարեփոխութիւնն ըրեր են Բ. յօդուածին վրայ. եթէ զիտողութիւն ընող չը կայ այս նոր բարեփոխութիւնը քուէի պիտի դնեմ:

Ատենապետ էֆէնտին քուէի զրաւ, եւ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՅՑ նոր բարեփոխութիւնը:

Յօդուած 3

« Առ նուազն 75 զրուչ տարեկան տուրք « վճարողն ըստ Սահմանադրութեան երեսփոխանական ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք կ'ունենայ »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս ալ Սահմանադրութեան մէկ յօդուածն է որուն վրայ վիճաբանութիւն ընելու հարկ չկայ: Բայց եթէ կը ներուի, ես ոչ իբրեւ ատենապետ, այլ իբր անգամ ժողովոյն փոքրիկ զիտողութիւն մը կ'ընեմ. այս յօդուածին տեղը հոս չէ, ընտրական օրինաց մէջ պէտք է դնել. ուստի վերցընել կ'առաջարկեմ չէ թէ մերժելով:

ՁԱՅՆԵՐ. — Կը կրկնենք:

Սոյն առաջարկութիւնը քուէի զրուելով եւ ընդունուելով, միաձայնութեամբ ՈՐՈՇՈՒՅՑԱԻ ծրագրին երրորդ յօդուածը նոյնտեղէն բաժնալ:

Յօդուած 4

« Տրոց բաշխումը կատարելու համար « մեն թաղական խորհուրդ իւր մէջէն եւ դրսէն « այս մասին յարմարութիւն ունեցող անձինքնեք « բէ բաղկացեալ յանձնաժողով մը կը կազմէ, « որն որ կը հրաւիրէ նոյն թաղին մէջ բնակութիւն հաստատող եւ տուրք տալու կարողութիւն ունեցող ազգայինները եւ հետերնին համահաճութեամբ կ'որոշէ տալու տուրքին որ « քանութիւնը. զորն որ պիտի հաստատէ նոյն « ազգայինը իւր ստորագրութեամբը յատուկ « տեսրակի մը մէջ »:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Տրոց բաշխման գործն եթէ թաղական խորհրդոց ձեռք ըլլայ կը դժուարանայ, վասն զի անոնք զբաղմանց տէր են. եթէ Պատրիարքարանի միջոցաւ ըլլայ կարծեմ աւելի զիւրութիւն կ'ունենայ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ յարույ՜ արուհի՜ չը քուէ բառերը վերցուին իբրեւ աւելորդ. բաւական է ըսել լըն ու լըն չը քուէի քուէի նոյն նախընթաց քուէի քուէի վասն զի կրնայ ըլլալ որ մէկը առանձին թղթի մը վրայ ստորագրէ, ան ատեն այդ ստորագրութիւնը չը պիտի ճանչցուի:

ԵՆԻՍՈՒՅՑԵԱՆ Տ. ԷՖ. — Համարակալութեան գիււանն այդ մասին զիտողութիւն չըներ:

Չորրորդ յօդուածին վրայ ուրիշ զիտողութիւն ընող չըլլալով, քուէի զրուեցաւ, եւ Փափագեան էֆէնտիին առաջարկութեանը համաձայն յարույ՜ արուհի՜ չը քուէ բառերը վերցուեցան, եւ յօդուածին մնացեալ մասն ամբողջ ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ:

Յօդուած 5

« Յիշեալ յանձնաժողովը 15 օր պայմանաւ « ժամ կուտայ իւրաքանչիւր ազգայնոյ ի խորհրդարան ներկայանալու համար, եւ պայ « մանաժամուն լրանալէն ետքը, ներկայացող « ներուն իրենց աստիճանին համեմատ վճարե « լու տուրքին քանակութիւնը յանձնաժողովը « կ'որոշէ եւ մասնաւոր նամակաւ իրեն կը « հաղորդէ, որ եթէ զիտողութիւն մը ունի, « 15 օրուան մէջ հաղորդէ յանձնաժողովին. « այս պայմանաժամը լրանալէն ետքը, եղած « զիտողութիւնները չպիտի ընդունուին այն « տարուան համար »:

ԻՓԼԿՅԵԱՆ ԷՖ. — Հրաւիրեալ անձը կրնայ բացակայ գտնուիլ եւ ներկայանալ. այս պարագային մէջ ինչ ընելու է. կարծեմ թէ պարբերութիւն մը յաւելցնել պէտք է հոս, որ պէս զի բացակայ գտնուողը պարտազանց չհամարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համարակալութեան գիււանին տեղեկագրեր էֆէնտին կ'ուզէ արդեօք պատասխանել Իփէկճեան էֆէնտիի զիտողութեանը:

ԵՆԻՍՈՒՅՑԵԱՆ Տ. ԷՖ. — Այո, Իփէկճեան էֆէնտիին ըսածը կրնայ ըլլալ եթէ ժողովը հաճի:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Քանի մը բառ կը բաւէ — ունի թոյլ — քուէի քուէի նոյն նախընթաց քուէի քուէի լըն լըն չը քուէի քուէի:

ԵՆԻՍՈՒՅՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ինչ կ'երեւի թէ քիչ մ'ալ աւելի որոշ բացատրութիւն մը դընելու է. վասն զի օրինակի համար երբ Օր-

Թագիւղ իմ տունս նամակ մը գայ ինձ 15 օր- ուան պայմանաժամու : կրնայ ըլլալ որ այն միջոցին մէջ կ'ելնեմ ֆրանսիացի կողմէն կ'երթամ եւ 5 ամիս հոն կը մնամ , վերջն ալ կ'ըսեմ թէ բացակայ էի : Ուստի այս կէտն աւելի որոշ կերպով բացատրելու համար պէտք է ըսել թէ « պայմանաժամուն լրանալէն ետքն ուսուցչու- նաւորներու քրտն- ջնկերկայացողներու » եւ այլն :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Եթէ ժողովը կ'ըն- դունի բացակայութեան պատճառն եւ պատ- շած կը տեսնէ ճանապարհորդութեան պատ- ճառը յաւելցնել , ես կ'առաջարկեմ թէ հիւանդ- յութեան պատճառն ալ պէտք է յաւելցնել . վասն զի կրնայ պատահիլ որ մէկը ծանր հի- ւանդ ըլլայ , եւ ներկայանալու եւ իւր տրոց բաժինն ստորագրելու անկարող :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ Կանոնադրութեան մէջ երեսփոխանաց համար ինչ պատճառներ որ ցուցուած են , անոնց ա- մենն ալ իբր օրինական պատճառ նշանակուին եւ յաւելնան Տրոց ծրագրին այս յօդուածին մէջ :

ԵՆՆԱԿԵԱՆ Տ. ԷՖ. — Ինչպէս որ պահ մը առաջ ըսի , այս յօդուածին մէջ դրուելիք բացատրութիւնն այնպիսի կէտի մը կը վերա- բերի , որուն վրայ հասուն խորհրդածութիւն պէտք է ըլլայ : Կրճիկեան եւ ֆրիստոստուր էֆէնտիները կ'առաջարկեն որ Կանոնադրու- թեան մէջ երեսփոխանաց բացակայութեան համար ցուցուած պատճառներուն ամենն ալ յաւելցուին նաեւ Տրոց ծրագրին այս յօդուա- ծին մէջ . . .

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ես միայն հիւանդու- թեան պատճառը յաւելցնել առաջարկեցի :

ԵՆՆԱԿԵԱՆ Տ. ԷՖ. — Շատ լաւ , դուք միայն հիւանդութեան առաջարկեցիք , իսկ ֆրի- ստոստուր էֆէնտին ամենքը մէկէն առաջար- կեց : Ես կ'ըսեմ թէ Կանոնադրութեան մէջ ե- րեսփոխանաց համար ցուցուած 4 պատճառնե- րէն 5 ը Տրոց ծրագրին մէջ չեն կրնար ընդուն- ուիլ , եւ միմիայն ճանապարհորդութեան պատ- ճառը կրնայ ընդունուիլ : Վասն զի ենթադրե- լով թէ մէկը ծանր հիւանդ է եւ չկրնար թա- զին խորհրդարանը ներկայանալ , ո՞վ է զինքը հրաւիրողն . Թաղական խորհուրդը կամ անկէ- ընտրուած յանձնաժողովն է . տարակոյս չկայ թէ այս յանձնաժողովը զիտէ թէ այնպիսի հի-

ւանդ մը ըլլայ նէ ինչ ընել պէտք է , այդ իր խոհեմութենէն կախեալ է : Ի հարկէ այսպիսի պարագաները նկատողութեան առնելով` ըստ այնմ արժան եղած տնօրէնութիւնը պիտի ը- նէ : Մենք պէտք է սկզբունքին վրայ մտա- ծենք . ազգային ծախուց հանգանակութեան մասնակցելու համար ամեն անհատ պարտակա- նութիւն ունի , պարտի յօժարակամ երթալ եւ իր բաժինը վճարել : Իսկ այդ պարտականու- թիւնը կատարելու չփութացող կամ զանցա- ռութիւն ընողներուն համար` կը տեսնենք որ ծրագրին ոչ միայն խստութիւն չընեցնէր , այլ ընդհակառակն դիւրութիւն եւ պայմանա- ժամ կուտայ : Միայն մայրաքաղաքէս դուրս գտնուող չկրնար որոշեալ պայմանաժամուն մէջ ներկայանալ իւր բաժինն ստորագրելու համար . այս նկատմամբ ըսի որ ճամբորդու- թեան պատճառն իբր բացառութիւն նշանակ- ուիլ : Իսկ Ազգային ժողովոյ նստերուն ներկայ չգտնուող երեսփոխանաց բացակայութիւնն արդարացիոց պատճառներուն Տրոց որոշման գործողութեանը չկարենալ համաձայնիլը խիստ դիւրին է ըմբռնել , նկատելով որ յանկարծա- կան որեւիցէ դէպք մը կրնայ բանաւոր պատ- ճառ համարուիլ ժողովէն բացակայ գտնուե- լու , որոյ նիստն 5-4 ժամ միայն կը տեսէ . ուստի կրնայ ըլլալ որ իմաց տալու անգամ մի- ջոց չտայ զիպուածը : Սակայն այն գործողու- թեան մէջ ուր 15 օր միջոց տրուած է , որ եւիցէ պատճառ մը չկրնար արդարացիւ լը- ռութիւն պահողները , բաց ի ծանր հիւանդու- թենէ , որ այս պարագայիս մէջ ինքնին բա- նաւոր պատճառ մ'է արդէն , ինչպէս որ մեկ- նեցի , եւ բաւական համարենք միայն ուսուց- ճանապարհորդութեան պարբերութիւնը յաւելցնելով , որ անշուշտ մայրաքաղաքէս բա- ցակայ ըլլալը կը հասկցուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբր երեսփոխան դիտող- րութիւն մ'ալ ես պիտի ընեմ այդ կէտին վը- րայ : Ըստ իս բոլորովին աւելորդ է այդ առա- ջարկուած բացատրութիւնը դնել ծրագրին մէջ . վասն զի եթէ մէկը ճամբորդ է , 15 օր պայ- մանաժամէն ետեւ թաղային յանձնաժողովը կրնայ իմանալ , ուստի ես կ'առաջարկեմ որ անփոփոխ մնայ այս հինգերորդ յօդուածը եւ բան մը չը յաւելնայ անոր մէջ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԵՒ ՀԱԼԱՃԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ Կանոնադրութեան չորսերորդ յօդուածին մէջ կ'առաջարկուի իր պարտականութեան համար ամեն անհատ պարտակա- նութիւն ունի , պարտի յօժարակամ երթալ եւ իր բաժինը վճարել : Իսկ այդ պարտականու- թիւնը կատարելու չփութացող կամ զանցա- ռութիւն ընողներուն համար` կը տեսնենք որ ծրագրին ոչ միայն խստութիւն չընեցնէր , այլ ընդհակառակն դիւրութիւն եւ պայմանա- ժամ կուտայ : Միայն մայրաքաղաքէս դուրս գտնուող չկրնար որոշեալ պայմանաժամուն մէջ ներկայանալ իւր բաժինն ստորագրելու համար . այս նկատմամբ ըսի որ ճամբորդու- թեան պատճառն իբր բացառութիւն նշանակ- ուիլ : Իսկ Ազգային ժողովոյ նստերուն ներկայ չգտնուող երեսփոխանաց բացակայութիւնն արդարացիոց պատճառներուն Տրոց որոշման գործողութեանը չկարենալ համաձայնիլը խիստ դիւրին է ըմբռնել , նկատելով որ յանկարծա- կան որեւիցէ դէպք մը կրնայ բանաւոր պատ- ճառ համարուիլ ժողովէն բացակայ գտնուե- լու , որոյ նիստն 5-4 ժամ միայն կը տեսէ . ուստի կրնայ ըլլալ որ իմաց տալու անգամ մի- ջոց չտայ զիպուածը : Սակայն այն գործողու- թեան մէջ ուր 15 օր միջոց տրուած է , որ եւիցէ պատճառ մը չկրնար արդարացիւ լը- ռութիւն պահողները , բաց ի ծանր հիւանդու- թենէ , որ այս պարագայիս մէջ ինքնին բա- նաւոր պատճառ մ'է արդէն , ինչպէս որ մեկ- նեցի , եւ բաւական համարենք միայն ուսուց- ճանապարհորդութեան պարբերութիւնը յաւելցնելով , որ անշուշտ մայրաքաղաքէս բա- ցակայ ըլլալը կը հասկցուի :

Հետեւապէս քուէի դրուելով հինգերորդ յօդուածն , Ատենապետ էֆէնտիին առաջար- կութեան համաձայն անփոփոխ ընդունուեցաւ :

Յօդ. 6

« Տարեկան տուրքը մէկ անգամէն չկրցող & վճարողները դիւրութեան համար , վեց ա- & միսն անգամ մը վեցամսեայ բաժինին կան- & խիկ վճարելով ալ կրնան հատուցանել » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք ուղող չկայ . ե- թէ այս յօդուածին վրայ դիտողութիւն ընող չկայ , ես ընեմ . այս յօդուածը բարեփոխու- թեան պէտք ունի . փոխանակ ըսելու « Տա- րեկան տուրքը մէկ անգամէն չկրցող վճարող- ները եւ այլն » , որով անկարողութիւննին ե- րեսի զարնուած է , եւ օրէնքը չը կրնար այդ- պիսի բարբառ գործածել . պէտք է ըսել՝ Տու- րէնքն արդէն երեք անգամ չը լինուի չը վեց ան- ցամուսնէ . ուստի ուր է անգամաւ անգամ անգամ չը լինուի չը վեց անգամաւ անգամ չը լինուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ տարեկան տուրքը փոխանակ երկու անգա- մի՝ երեք անգամով վճարուի . վասն զի տուողին կողմանէ դիւրութիւնն ալ մտածել պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ուրիշ դիտողութիւն չը կայ , քուէի պիտի դնեմ նախ իմ բարեփո- խութեան առաջարկութիւնս , յետոյ ֆրիստոս- տուր էֆէնտիին առաջարկութիւնը :

Հետեւապէս քուէի դրուելով , վեցերորդ յօդուածն Ատենապետ էֆէնտիին առաջարկած բարեփոխութեամբն ընդունուեցաւ :

Յօդ. 7

« Քաղաքական գործոյ մը համար Պատրի- « արքարան կամ Թաղական խորհուրդներուն « զիմոզ ազգայինէ մը տարին լրացած եւ ե- « ղեք անգամ ուղողած՝ բայց տակաւին ան- « վճար ձգուած ու զիջուած տուրքներն առ- « նուելէն ի զատ նաեւ սոյն տրոց վրայ տա- « րեկան 10 առ հարիւր տուգանք պիտի պա- « հանջուի եւ առնուի , եւ ետքը նոյն անձին « գործը տեսնուի » :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ տուգանքի խօսքը վերցուի . Ազգին արժանա- պատուութեան կը դաչի . որովհետեւ Հայ ազ- գէն ոչ մէկը մինչեւ ցայսօր իր տուրքը ինա-

յած է . այսքան եկեղեցիներ եւ վանքեր , դպրոցներ եւ ուրիշ բարեգործական հաստա- տութիւններն ազգայնոց տրօքն եղած են , եւ երբէք տուգանք առնելու սովորութիւն մտած չէ Ազգին մէջ . այդ բարը կը վերաւորէ ազ- գայնոց սիրտերը , ուստի վերցուիլը կ'առա- ջարկեմ :

ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Կը ձայնակցիմ ֆրիստոստուր էֆէնտիին առաջարկութեան :

ԵՆՆԱԿԵԱՆ Տ. ԷՖ. — Համարակալութեան դիւանը բարեփոխութիւն մը պատրաստած է այդ յօդուածին վրայ , որ կարծեմ զամենքն ալ կրնայ գոհացնել : Թոյլ տուէք որ կարդամ զայն .

« Յօդ. 7. Եթէ մէկը իր տարեկան տուր- « քը մինչեւ նոյն տարուոյն վերջը եւ անկէ « ետքն ալ մինչեւ երեք ամիս վճարած չըլ- « լայ , պարտական է իր անվճար տրոց հետ « նոյն գումարին հարիւրին 10 ալ իբրեւ տոյժ « աւելորդ վճարել : Այս կարգի ազգայինք երբ « քաղաքական գործոյ մը համար Պատրիարքա- « րան կամ Թաղական խորհուրդներուն զիմն , « նախ իրենց այս պարտքը ամբողջ պիտի վը- « ճարեն , եւ ապա իրենց գործը պիտի տես- նուի » :

Կը տեսնէք որ տուգանք բարը վերցուած եւ անոր տեղ արդէն բարը գործածուած է : Արդէն անցեալ նիստին Քաղաքական ժողովոյ տեղեկաբեր Կոստանդ էֆէնտին մեկնաբանեց ըստ բաւականի թէ ինչո՞ւ Վարչութիւնն իւր ծրագրին մէջ այս տուգանքն առաջարկեց է . ներեցէք որ համառօտ կերպով մը ես ալ կըրկ- նեմ : Երբ տուրքը կը հաստատուի , ազգային Վարչութիւնը բանի միջոցներ չունի զայն հա- ւաքելու . այլ իւրաքանչիւր անհատ իւր ազ- գասիրական զգացումէն բնադատեալ պիտի վճարէ զայն : Սահմանադրութիւնը բացորոշ կերպով կը տրամադրէ որ իւրաքանչիւր ան- հատ իւր կարողութեան չափով պարտաւոր է ազգային տարեկան ծախուց հանգանակել . բայց անտարակոյս պիտի գտնուին այնպիսի անձինք , որոց տուրքը գուցէ տարիներով ան- վըճար պիտի մնայ , եթէ Պատրիարքարանի հետ գործերնին պատահի՝ այն ատեն ամենը մէկէն վճարելն աչքերնին առնելով , նման այն վա- ճառականին՝ որ իւր բազմիկ վատահելով իւր ապրանքներն երբէք ապահովութեան չընէր , երկար տարիներ ապահովութեան համար վճա-

րելիք գումարը մէկ կամ երկու դիպուածի մէջ ընելու կորուստէն մեծ համարելով : Եւ որովհետեւ ամենեւին բաժնուկներն չը կայ տրոց հաւաքման համար, յայտնապէս կ'երեւնայ թէ պիտի գտնուին դաս մը ազգայինը՝ որք վերայիչեալ խորհրդածութիւնն ընելով, պիտի ուշացնեն իրենց տուրքին վճարումը, որմէ շատ մը մնացորդ առնելիք պիտի դիպուի : Ահա այս պատճառաւ Գաղափարական ժողովը տուգանքը մտածեր եւ առաջարկեր էր իւր ծրագրին մէջ, զոր Համարակալութեան դիւանս ալ ընդունելի գտաւ եւ անցուց նաեւ իւր ծրագրին մէջ : Միայն բառին գալով, ըստ որում ասոնք բառը ոմանք շատ ծանր գտան, այս անգամ բարեփոխելով ասոնք բառը դրինք : Այս տուգանքին կարեւորութիւն տուող գլխաւոր պատճառը սա է որ Արշութիւնը ոչ-որքէ մը ունի, երբ տուրքերը ժամանակին չը հաւաքվի եւ պիտե՞նք բաց ունենայ, Արշութիւնն այն բացը գոցելու համար ազգայնոց վճարելիք տուրքին վրայ վրաստանելով փոխառութեան պիտի դիմէ եւ տուկոսաւոր պարտոց տակ պիտի իյնայ : Եւ եթէ չկրնայ իւր պարտքը ժամանակին վճարել անպատուութեան մէջ պիտի իյնայ : Այս անպատուութեան պատճառ այն անձինք պիտի ըլլան՝ որոնք կարողութիւն ունին եւ խոստացեր են ու չեն վճարեր ժամանակին իրենց տուրքը : Կետեւապէս իրենցմէ պահանջուած հարկերն տասը տուգանքն իրենց հանգանակութեան բաժնին ինկած տոկոսն է որ Պատրիարքարանը պիտի տուժէ, եթէ նոքա չը վճարեն : Մանաւանդ որ այս կարգի անձանց ըսող ալ չը կայ թէ այս տարուան տուրքը անմիջապէս պիտի վճարեն : այլ ընդհակառակն ոչ միայն տարեկան տուրքը մինչեւ տարեգլուխ վճարելու համար պայմանաժամ դրուած է, այլ եւ յաջորդ տարւոյն մէջ ալ եւամսեայ միջոց մը դրուած է : կարծեմ իրաւունք չէ թէ ժամանակին իւր տուրքը վճարողը եւ այն որ չվճարէր, երկուքն ալ միեւնոյն իրաւանց տէրն ըլլան : պէտք է որ չը վճարողը բան մը տուժէ : Ահա այս նպատակաւ խմբագրուած է սոյն եօթներորդ յօդուածը :

ՂԱԶԱՐՈՍԻՍՏ Գ. ԷՑ. — Եռուֆեան էֆէնտին բառը կը փոխէ : բայց գործողութիւնն ինչ է նէ նոյնը կը մնայ : տոյժ կամ տուգանք երկուքն ալ միեւնոյն բանն ըսել է եւ շատ ծանր է, որովհետեւ Տէրութիւնն անգամ այս-

պիտի միջոց մը ձեռք չէ ուղեր առնուլ մինչեւ ցարդ իւր պայմանները ժողովելու համար : բանտիւ եւ այլ միջոցներով կը ներդէ, բայց տուգանք չառնուր : Եռուֆեան էֆէնտին ապահովութիւն կ'ուզէ : ապահովութիւնը ուրիշ տեղ փնտել պէտք է : Ազգը երբ տեսնէ թէ իր տուած ստակն առ ոչինչ չերթար եւ Ազգին յառաջադիմութեանը կը գործածուի, Պատրիարքարանը բարեկարգութեան մէջ է եւ անգային գործերն կանոնաւոր ուղղութիւն մ'առած են եւ գաստիարակութեան ալ հոգ կը տարուի, սիրով եւ ինքնացօժար կուտայ : Ես փորձով ստուգած եմ որ Ազգին տուած ստակովը Պատրիարքարանի ծախքը հողացուելէն ետեւ մէկ տարուան մէջ 70 հազար զուրուչ ալ հին պարտք վճարուած է, եւ մէկ քանի տարիներէ հետեւ ալ այդ հին պարտոց համար ստակ տալու վրայ է : Ի բաց առեալ պարտոց համար երեւելի ոմանց տուածները : Ըսենք թէ այս տարի այս կամ այն անձինք չեն տար, բայց ուրիշները կուտան : Եւ այն չտուողներն ալ ուրիշ ժամանակ կուտան, ուշ կանուխ կուտայ Ազգը իւր տուրքը, ուստի կը կրկնեմ թէ տուգանքի կէտն անընդունելի է ըստ իս, պէտք է որ ջնջուի ծրագրին մէջն :

ՃԻԼԱՃԵԱՆ Գ. ԷՑ. — Ես ալ նոյնը կը կրկնեմ ԻԽԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՑ. — Քրիստոստուր էֆէնտինն առաջարկութիւնը պարզապէս կը նշանակէ Ազգին մէջ կանոնաւոր տուրք չը հաստատել : այս իմաստին կ'երթայ կը յանգի այդ առաջարկութիւնը՝ զոր բնաւ չեմ ընդունիր : Ես ուրիշ կէտի մը նկատմամբ միայն դիտողութիւն ունիմ, որուն վրայ անցեալ նիստին ալ խօսք եղաւ : քաղաքական գործոց պատճառաւ Պատրիարքարան եւ Թաղական խորհրդոց գիւմդներուն համար ըսուած է որ եթէ տուրքը չէ տուեր՝ պիտի ուզուի, եւ եթէ ժամանակ ալ անցեր է տոյժ մը պիտի առնուի : ըսել է թէ այս յօդուածը միայն անոնց համար է որոնց գործը կը պատահի : Իսկ մնացած ամենամեծ մասին համար՝ որ իրենց տուրքը չեն վճարած եւ գործերնին չէ պատահած ինչ պիտի ըլլայ : Համարակալութեան դիւանն այս կէտն ալ նկատողութեան առնելու եւ հարկ եղած միջոցը ցոյց տալու էր : ապա թէ ոչ ինչպէս Միաբան էֆէնտին անցեալ նիստին աղէկ ըսաւ, Պատրիարքարան գիւմդները միայն ծուղակը պիտի իյնան, եւ չգիւմդները

ծուղակը չպիտի բռնուին : Ենթադրելով որ ամենամեծ մասը գործ չպիտի ունենայ եւ ծուղակը չպիտի իյնայ, անոնց տուրքն ինչ միջոցաւ պիտի առնուի : այս կէտին վրայ ուշացողութիւն կը հրաւիրեմ եւ կ'առաջարկեմ որ նկատողութեան առնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ուրիշին խօսք տող յառաջ տեղն եկաւ որ ըսեմ : թէ Միաբանն եւ թէ Իւթիւճեան էֆէնտինները ծուղակի խօսք մ'ըրին : բայց ինչ է ատոր դարմանը՝ դայն չը ցուցին : Եթէ դարմանը դիտող կայ, այն պէտք է խօսի : ապա թէ ոչ առանց դարմանի կամ եզրակայութեան եղած խօսքերը յօդս կը ցնդին եւ ապարդիւն բարբառներ կը գտնուին : Խօսքը Տ. Ամբրոսիոս վարդապետին է :

Տ. ԱՄԲՐՈՍԻՍՏ Վ. — Իւթիւճեան էֆէնտին մերժեց Քրիստոստուր էֆէնտինի առաջարկութիւնն ըսելով թէ Ազգին մէջ կանոնաւոր տուրք չհաստատել կը նշանակէ : Ես պիտի հերքեմ այս խօսքը : վասն զի ազգային տուրքն օրինաւոր դրութեան մը մէջ մտցնելու համար մինչդեռ Հայ ժողովուրդը կը բաղձար շատուցի վեր, այսօր պատեն ունեցաւ ներկայ Սըրբազան Պատրիարք Հօր եւ Ազգային ժողովոյ շնորհիւ հասնել իւր այդ փափաքին : որոյ նըպատակն ոչ այլ ինչ է, բայց եթէ Ազգին պիտոյքը հողալու համար սահմանուած ազգային տուրքը աւելի օրինաւոր հիման մը վրայ հաստատել, Ես մեծ յոյս ունիմ որ երբ ազգային տուրքը այսպէս օրինաւոր սահմանի մը մէջ մտնէ, չպիտի գտնուի մէկն որ իրեն ինկած բաժինը զլանալ ուզէ : Ընդհակառակն ամեն ոք սիրով պիտի մասնակցի ազգային տրոց, տեսնելով որ օրինաւորութեան ճամբուն մէջ մտած է : ուրեմն ինչո՞ւ խրտուցնենք տուգանք դնելով եւ ինչո՞ւ դժուարութիւններ հանենք այսպիսի բռնի միջոցներ սահմանելով : Իրաւ է որ տուրքը զլացողին վրայ հարկ եւ պարտաւորութիւն դնելու նպատակաւ տոյժ մը սահմանելու առաջարկութիւնը նախանձախընդրութեան ոգիէ յառաջ եկած է : սակայն քանի որ մեր Ազգին կառավարութիւնը բարոյական եւ հայրական է, պէտք է հետու կենանք բանա՞ տուգանքէ եւ այս կարգի պատիժներէն : չեմ ըսեր թէ բնաւին պատիժ չըլլայ, թող ըլլայ, բայց բարոյական պատիժ : օրինակի համար կրնանք սահմանել որ այնպիսիք բուէարկութեան իրաւունքէ զրկուին մին-

չեւ որ իրենց պարտքը վճարեն : Ես կը հաւատամ որ երբ Ազգին տուած տուրքն օրինաւորութեամբ վատնուի, երբ ամեն մարդ տեսնէ թէ ժողովուած ստակներն Ազգին կենսական շահերուն եւ յառաջադիմութեանը համար կը գործածուին, այն ատեն ամեն անհատ սիրով պիտի վճարէ : եւ եթէ գտնուին անտարբեր ոմանք՝ որ զլանան իրենց օրինաւոր պարտքը հատուցանել, պէտք չէ բուռն միջոց կամ պատիժ սահմանել : այլ առ այժմ այնպիսեաց անունը հրատարակելը բաւական պատիժ կրնայ ըլլալ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. — Օրէնքի մը էական տարրը վարձ եւ պատիժն է : այն օրէնքը միայն կրնայ անսայթաք քայլել որ այս էական տարրերն իւր մէջ ունի, եթէ ոչ չը կրնար քայլել : Մինչեւ ցարդ տեսանք բարոյական պատիժներու ազդեցութիւնը, եւ տեսանք թէ որչափ կրցանք յառաջ երթալ : Արդարեւ մեք չունինք այն իշխանութիւնը, որով կարենանք տրոց հաւաքման համար բուռն միջոցներ ի գործ դնել : սակայն երբ ազգային պէտքերը հողալու համար վարչութեան Քաղ. ժողովէն պատրաստեալ պիտե՞նք կուգայ, այն ազգայնիս՝ որ պատրաստուած պիտե՞նք մէջ իւր բաժինն ունի վճարել, չուզեր կամ չվճարեր, միանգամայն եւ ազգային գաստիարակութիւն կը պահանջէ, միշտ կը գոչէ թէ գաւառաց մէջ հարստահարութիւն կայ եւ անոր բարձուը կը պահանջէ, այսպիսի անհատէ մը, որ առանց իր պարտքը կատարելու իրաւունքը վայելել կուզէ եւ կը պահանջէ, երբ իրմէ հարկերին 10 տուգանք կը պահանջուի, շատ բան մ'է : ոչ, երեսփոխան տեսք, ոչ, պատիժ չէ այս, ինչպէս որ ոմանք նկատել տալ կ'ուզեն, այլ այսպիսի անհատները ազգային պարտքը կատարելու վիճակին մէջ գնելու համար հրահանգ մ'է, հետեւապէս պէտք է կ'ըսեմ այսպիսի միջոց մը սահմանել, Իւթիւճեան էֆէնտին առարկելով թէ շատերը գործ մը չեն ունենար Պատրիարքարան կամ Թաղական խորհրդոց գիւմդու, անոնց անազանեալ տուրքերն ալ առնելու համար միջոց մը սահմանել կ'առաջարկէ : շատ լաւ : մենք ալ կ'որոնենք դայս : բայց քանի որ մեր ներքին քաղաքական բովանդակ ոյժը Թաղական խորհրդոց եւ ազգային Պատրիարքարանի ծանուցագրերուն մէջ կեդրոնացած է, ուստի առ այժմ սակից զատ ուրիշ միջոց կամ

դարման չունինք . կրնանք ունենալ եթէ ժամանակը ընդարձակէ մեր ներքին քաղաքական ոյժը . ուստի եւ կ'առաջարկեմ որ սուգանքի կէտն , որուն պէտքը կզգացնէ Վարչութիւնը իր փորձառութեամբը , ընդունելով վերջացրենք այս խնդիրը :

ՉԱՅՆԵՐ . - Կեցցես :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ . - Տեսնոք երեսփոխանք , օրէնքը՝ կրէ՛ Մօսթէպէթօ , կը սահմանուի ազգի մը պիտոյիցն համեմատ , ուստի եւ դրուած ժամանակի ժողովրդեան հանգամանաց եւ վիճակին յարացոյցն է : — Այս առածը ճիշդ է , եւ ամեն ազգաց օրէնք զսոյն կ'ապացուցանեն : Մենք ալ որ այսօր Տրոց վերայ օրէնք մը կը սահմանենք՝ Ազգին ներկայ վիճակն ու հանգամանքը պիտի պատկերացրենքնք ապագայից առջեւ . ուստի եւ հարկ իսկ է որ Ազգերնուս արդի հանգամանաց համեմատ օրինադրենք , որպէս զի թէ ներկայիս օգտակար ըլլայ օրէնքը , եւ թէ ապագայ դարուց առջեւ մեր դարուս Հայ ազգութեանը վրայ թիւր գաղափար մը աւանդած չըլլանք : Այս կրկին մտածութեամբ կը մերժեմ եւս տուգանք դնելու օրինաց առաջարկութիւնը . վասն զի ոչ ներկայիս օգտակար է , ոչ ներկայ պէտքի մը հետեւանք է , եւ ոչ իսկ ապագայից արդար գաղափար մը պիտի հաղորդէ ներկայիս վրայ : Ներեցէք ուրեմն , Տեարք , որ խօսքս քիչ մը պարզարանեմ , վասն զի կ'երկնչիմ որ տուգանաց առաջարկութեան ընդունելութիւնը , բոլորովին անժողովրդական ընէ ինչ յօդուածներ որ ցարդ որոշեցիք արոց օրինաց մասին թանաղատիչ կերպարանք մը տալով անոր :

Գիտեմ , Տեարք , որ ամենայն ազգաց օրէնսդիրք տուրքը հաստատած ժամանակնին կ'երաշխաւորեն զայն պատիժներով , Բայց մեր Ազգին հատուցանելիքն՝ ըստ որում կամաւոր նուէր մըն է միայն , կարելի է անոր երաշխաւորութիւնը տուգանաց կամ պատժոյ մէջ փրկատուել . ոչ երբէք : Այո , կամաւոր նուէր մըն է զոր Հայն ըրած է եւ պիտի ընէ իւր Ազգին , թէ եւ դուք այն նուէրին տուրք անուէր տաք : Պէտք չէ որ պետութեանց օրինադրած եւ հաւաքած արոց հետ շփոթենք մեր տուրքը , որ ճիշդ խօսելով հանգանակութիւն մըն է եւ ոչ այլ ինչ . ինչպէս ուրեմն կ'ուզէք որ տուգանաց այսինքն պատժոյ ենթարկուին հանգանակութեան չմասնակցողք :

Ինչ կը արամադրէ Սահմանադրութիւնն այս մասին . « Ազգայնոց պարտքն է , կ'ըսէ , Ազգին պիտոյիցը պահանջած ծախքին մասնակից ըլլալ իւրաքանչիւր իւր կարողութեան չափովը » : Այս պարտքը բարոյական պարտք մըն է , եւ երբէք իրաւունք չէ որ բարոյական պարտուց գործադրութիւնը բարոյական պատիժներէ դուրս նիւթական տուգանքներով երաշխաւորուի : Տէրութիւնք պատիժներ սահմանած են տուրք չտուողներու , բայց այն պատիժները՝ սուիններու եւ սուսերաց զօրութեամբը , բանտերու եւ շղթայից բռնութեամբք կը գործադրուին : Ունինք մենք այս բուռն միջոցները : Ինչպէս կարելի է ուրեմն հպատակ ազգ մը նիւթական պատիժ մը տուգանք մը դնել խորհի յօժարակամ հանգանակութեան մը չմասնակցողներուն : Պէտք չէ գաղափարաց շփոթութեամբ թիւր ու անել ճամբաներ ստանակուիսնք . վասն զի հետեւանքը շատ ծանր կրնայ ըլլալ մեր Ազգին համար : Բռնադատութիւնը բարոյական ազգի մը համար չէ :

Արդ , եթէ մեր ազգային իշխանութիւնը բարոյական իշխանութիւն մըն է , ըսել է թէ կարող չենք բռնադատիչ եղանակաւ տուրք հաւաքել . ուրեմն եւ չունինք իրաւունք տոյժ կամ տուգանք օրինադրելու : Մեր մեծարգոյ պաշտօնակիցներէն ոմանք ուզելով որ քանի մեզմացնել քոյժ բառն առաջարկեցին , Բայց ինչ օգուտ բառերու փոփոխութենէ , քանի որ պատժական իմաստը միեւնոյնը կը մնայ . բայց միթէ բառերն ալ տարբեր են : Այ . վասն զի քոյժ եւ քո-ք-նէ հոմանիչ բառեր են մեր լեզուին մէջ , զոր նախնի մատենագիրք անխտիր իրարու տեղ կը դործածեն , եւ մերթ իրարու քով կից : Ըստ քերականական օրինաց է եւ թ տառերը լծորդ լինելով , քո-ք-նէ բառն ոչ թէ տարբեր՝ այլ տուգանք բառն է ճիշդ , երկուսն ալ արմատն ունենալով քոյժ բառը : Բաց ի ստուգաբանական ապացոյցէս՝ նաեւ սա ալ կայ որ մեր նախնի թարգմանիչը յունական Զլ-Ք- բառը մերթ քոյժ եւ մերթ քո-ք-նէ կը թարգմանեն : Ապա ուրեմն առաջարկուած բառական փոփոխութիւնը թէեւ ըստ բառին աննշան , բայց նշանաւոր է ըստ իս այն մասին որ ապացոյց մը կ'ընծայէ թէ նոյն իսկ պատժական օրէնքն առաջարկողներու գիտակցութեանն առջեւ տուգանաց գաղափարը ծանր կուգայ . ուստի կ'ուզեն ա-

նոր թեթեւութիւն մը տալ , թէեւ առաջարկած բառերնին իրենց գիտաւորութեանը չը համապատասխանեն , ինչպէս որ հաստատեցի ըստ օրինաց հայկաբանութեան :

Ապա ուրեմն եթէ տուգանաց գաղափարն այսքան ծանր կուգայ զայն առաջարկողաց , նկատեցէք թէ որքան խիստ կ'երեւի այն մեզ եւ Ազգին : Այո , Տեարք , կ'ամաչենք որ Ազգային ժողովոյս մէջ տուգանաց օրէնք մը առաջարկուի այն ազգին համար՝ որ այսքան դարերէ ի վեր իւր առատածեռն նուիրատուութեամբքն իւր հաստատութիւնները հիմներ է եւ ցարդ կը պահպանէ : Դարձուցէք աչքերնիդ այս երկնանուէր յարկին վրայ , որ իւր նուիրական ստուերաց ներքեւ կը հիւրընկալէ զձեզ երեսփոխան Տեարք , մեր հարքն են զսա շինած իրենց լուծայիւր , եւ մեր եղբարքը կը պահպանեն զսա իւր փառացը մէջ՝ դարձեալ իրենց յօժարատուր լուծայիւր : Դարձուցէք աչքերնիդ մայրաքաղաքիս պանծալի հաստատութեանցը վրայ , նկատեցէք մեր հայրենեաց լիառահեղ տաճարաց , իմաստնաճեմ վարժարանաց եւ սրբանուէր վանօրէից վրայ : Յօժարակամ նուէրներու արդիւնքներ են անոնք : Անոնք զօրաւոր ու անդիմադրելի ապացոյցներ են թէ Հայոց ազգը տուգանաց եւ սպառնալեաց պէտք չունի իւր նուէրքն ընելու : Այս այն ազգն է որոյ առատածեռնութիւնն առակ դարձած է հին ժամանակներէ ի վեր , ինչպէս Ասողիկ կը գրէ . Հարուստն ու ազքատ հաւասարապէս երախտաւոր եղած են իրենց յօժարափոյթ նուէրներովն՝ երբ եւ ուր ազգին պէտքը պահանջած է : Արնաք զայն ժխտել : Պատմութիւնը ժխտած կ'ըլլաք , եւ հանրածանօթ եւ ամենուս աչքին առջեւ փայլող ճշմարտութիւն մը ուրացած պիտի համարուիք :

Հայ ազգին ըսել թէ նուէրքդ եթէ չտաս՝ տուգանաց զքեզ կենթարկես , չճանչել է Հայ ազգն , սոսնակութիւն է անոր պատուարժանութիւնը , վիրաւորել է անոր վեհ զգացումները : Միթէ տուգանաց երկիւղին տակն է որ այս ազգը մինչեւ ցարդ առատածեռնեց եւ այսքան հոյակապ տաճարներ եւ մեծակառոյց դպրոցներ շինեց . տուգանաց սպառնալիքն է որ Հայուն կ'առաջնորդէ իւր հիւանդանոցներն , իւր վարժարանները , իւր եկեղեցիները , իւր վանքերը պահպանել ինամել եւ բարգաւաճեցնել : Ո՞վ ձեզի իրաւունք կուտայ նախատեսելու թէ

զոր ինչ մինչեւ ցարդ սիրով տուած էր , այսուհետեւ չպիտի տայ . ուստի եւ տուգանաց սպառնալիք պէտք ըլլայ : Եւ ես ձեզ կ'ըսեմ . այդ սպառնալիքը , այդ պատժական առաջարկութիւնը՝ զոր օրինաց կարգն անցընել կ'ուզէք , բաւական է Հայուն ինքնայօժար նուէրներուն աղբիւրները ցամփեցնելու . եւ ամենայն իրաւամբք , վասն զի այդ թիւր սկզբունքին հետեւանքն է որ պիտի քաղէք : Այո , թիւր սկզբունք է կամաւոր նուէրն իրրեւ պետական տուրք նկատել , եւ զայն հաւաքելու համար պատժական սպառնալիք ընել . տրամաբանութեան համաձայն չէ այդ առաջարկութիւնը . արդարութեան ալ համաձայն չէ . վասն զի տուգանաց պիտի ենթարկէք զանոնք միայն՝ որ ինչպէս ըսուեցաւ յոմանց մեծարգոյ պաշտօնակցացս , Պատրիարքարան զի մնու գործ կամ հարկ պիտի ունենան : Ըսել է թէ գործ չունեցողք՝ թէ եւ հանգանակութեան մասնակցած ալ չըլլան , ձեր առաջարկած տուգանքէն ազատ պիտի լինին . ըսել է թէ ոչ տուրք ոչ տոյժ պիտի տան : Արհարցունեմ , արդարութիւն է այս : Ապա ուրեմն այդ ձեր հաստատել ուզած օրէնքն արդարութեան դէմ է բոլորովին : Այն է արդար օրէնք՝ որ հասարակաց վրայ կը ծաւալի . օրէնքը հաւասարութիւն կ'ենթադրէ , եւ հաւասարութիւն չկայ ձեր առաջարկած տուգանաց մէջ . ուրեմն անիրաւ է . ուստի եւ այս տեսակէտովս իսկ անընդունելի : Գիտէք ասով ինչ կ'ընէք . կը քաջալերէք ծոյլերը , կը վիրաւորէք սրտերը , եւ կը վախնամ ըսելու թէ ազգային հանգանակութիւնը հասարակաց առջեւ դժպիսի պիտի ընծայէք :

Եթէ լաւ ճանչեր ենք այս ազգը , եթէ այսքան դարուց եւ մեր իսկ փորձառութիւնը բաւական են երաշխաւորութեան , այս ազգն ինչպէս մինչեւ ցայսօր սիրով տուած է , այսուհետեւ եւս կուտայ սիրով . թողէք որ իւր տուրքին չափն որոշէ այդ իւրաքանչիւր , եւ ապահով եղիք որ ամեն Հայ լիայօժար պիտի հատուցանէ ինչ որ իւր խոստմամբն ու ստորագրութեամբը հաստատեց պաշտօնապէս ազգին առջեւ : Մի կարծէք թէ Հայն այն աստիճան հասած է ձեր օրովն՝ որ իւր ստորագրութեան պատիւը չճանչէ եւ կամ չուզենայ պահպանել : Եթէ մասնաւորք ոմանք գտնուին իրրեւ քացառութիւն , անոնց համար իրենց

խիղճը եւ հասարակաց առջեւ գտած անպատ-
 դու թիւնն ու մեղադրանքը ծանր են քան
 ձեր առաջարկած տուգանքն : Այնպիսեաց հա-
 մար Սահմանադրութեան ոգւոյն համաձայն
 կարելի է անօրինութիւն մը ընել . այսինքն
 ընտրողական քուէի արժանի չհամարել այն
 Հայն՝ որ հասարակաց պիտոյից համար հաւաք-
 ուած հանգանակութեան չուղեր մասնակցիլ :
 Նիւթական պատիժ մը չէ ասիկա , բայց Ազգ-
 Սահմանադրութեան արամադրած քարոյական
 արդար պատիժն է , որ կրնայ հաւասարապէս
 տարածուիլ ամեն հետողաց եւ ժլատաց վրայ ,
 եւ որ Սահմանադրական սկզբանց վրայ հիմ-
 նուած է , ըստ որում իրաւունք եւ պարտք
 իրարու հետ շարժակապեալ են եւ զիրար կ'են-
 թադրեն . ուր իրաւունք կայ՝ հոն պարտք ալ
 կայ , եւ ուր պարտքը կը գաղթի իրաւունքն ալ
 կը կորսուի :

Վերջապէս , Տեսնաք երեսփոխանք , Հայ
 ազգին ներկայն՝ անցելոյն համապատասխան է .
 կը յաջողինք հանգանակութեան օրէնքը հաս-
 տատել , եթէ բռնադատիչ հանգամանքներ
 չմտնեն անոր մէջ : Մերժենք տուգանքը , վասն
 զի արդար չէ , վասն զի անիրաւ է , վասն զի
 Ազգին պատուարժանութիւնը կը վիրաւորէ :
 Հրաւիրենք այս առատաձեռն ազգը՝ որ իւր
 անցելոյն արժանի միշտ հանդիսանայ նաեւ ա-
 պագային մէջ : Եւ ես ապահով եմ որ Հայոց
 ազգը պիտի սիրով ողջունէ զայն ամեն առա-
 ջարկութիւն՝ որ կը հրաւիրէ զինքն իրեն արժա-
 նի լինիլ միշտ , եւ ազգին փառքն ու պատիւը
 պահպանել եւ դաստիարակութեան անհրա-
 ժեշտ պէտքերը հոգալ իւր լիայօժար նուիրա-
 տուութեամբբը :

ԶԱՅՆԵՐ . — Ծնորհակալ հնք . . . կեցցենս
 Խորէն Սրբազան :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ . — Տոյժ եւ տուգանք
 բառերուն վրայ Գեր . Խորէն Սրբազանին ըրած
 գիտողութիւններն իրենց քերականական նշա-
 նակութեանը մէջ ընդունելով , այնպէս են-
 թադրեմք թէ տոյժ եւ տուգանք միեւնոյն
 նշանակութիւնն ունին , թէ եւ այս երկու
 բառերուն գործածութեան մէջ տարբերութիւն
 մը կայ մէջերնին , բայց չեմ ուզեր հոս քերա-
 կանական խնդիր յարուցանել , միայն իմ նը-
 պատակս է տուգանք մը գրուելու կէտը պաշտ-
 պանել :

Ստոյգ է որ ինչպէս Գեր . Խորէն Սրբազան

մէջ բերաւ , Մօնթէսքիօ կ'ըսէ թէ լաւ օրէնք
 մը չինելու համար հարկ է ժամանակին հան-
 գամանքն ու ժողովրդեան վիճակն աչքի առ-
 ջեւ ունենալ : Շատ իրաւացի է այս խօսքը .
 եւ անա ազգային Վարչութիւնն ալ սոյն ըս-
 կըզբան համեմատ ժամանակին հանգամանքն
 ու Ազգին վիճակը մտածութեան նիւթ ընելով
 չիներ եւ բերեր է այս ծրագիրը : Հայոց ազ-
 գին այսօրուան վիճակին մէջ այս տուգանքին
 կարեւորութիւնն ըստ իս խիստ դիւրին է ըմ-
 բռնել :

Տեսնաք իմ , քանի որ մենք իբր սահմա-
 նադրական ազգ մէկ կողմէ բարոյական իշխա-
 նութիւն մը միայն կը նկատենք ի մեզ , միւս
 կողմէ նիւթական պէտքերու կարօտ կը գըտ-
 նենք զմեզ , այնպէս որ մեր բարոյական սե-
 պած իշխանութիւնը գործածելու համար նիւ-
 թականին մասն է որ ի գործ պիտի դնենք
 այսօր . ու որ կ'ըսէ թէ այսպէս չէ կը սխալի :
 Վասն զի ինչ է տուգանք . ձօն Սթուարտ Միլ ,
 որու կարծիքները յարգելի են , ստուգիւ կ'ըսէ
 թէ տուգանքն ուրիշ բան չէ , այլ ապահովու-
 թեան (սխալութեան) վարձ մը : Ամեն այն անձինք՝
 որ լուրջ կերպիւ կը խորհրդածեն , գիտեն եւ
 կը խոստովանին թէ ապահովութեան համար
 տրուած վարձը ամեն վաճառականի պարտքն
 է . եւ այդ վարձը խնայելով իւր ապրանքն ա-
 պահովութեան չղնող վաճառականն ոչ միայն
 անխոհեմ , այլ մինչեւ անգամ պարտազանց եւ
 յանցաւոր պէտք է համարուի . այսու ամենայ-
 նիւ տակաւին որչափ անթիւ վաճառականներ
 կան , որք ի վնաս իւրեանց կը յամառին ու ա-
 պահովութեան պատճառաւ փոքրիկ գումար մը
 չվճարելու համար կը կործանին : Այնպէս է
 նաեւ տուգանք . վասն զի այնպիսի մեծ իրաւ-
 ունքներ կան՝ որ տուգանքի վճարման հետ կապ-
 ուած են , եւ երբ մէկը տուգանք չը վճարէ կը
 զրկուի այն իրաւունքներէն : Բայց միթէ փոր-
 ձով չենք գիտեր թէ ժողովրդեան մեծագոյն
 մասն անտարբեր է այդ իրաւանց : Ես կը մի-
 անամ Գեր . Խորէն Սրբազանին ըրած առա-
 կութեանց եւ այնպէս կ'ըմբռնեմ թէ շատ ի-
 րաւացի են տեսական մասին մէջ . իսկ գործ-
 նական մասին մէջ բոլորովին սխալ :

Այո . մեր հայրերը հոյակապ եկեղեցիներ
 կանգնեցնեցին , եւ իրենց ժամանակին բերանց
 համեմատ մեծ գործեր կատարեցին . բայց
 Սահմանադրութիւն չունէին , այսօրուան կա-

նոնական տուրքի գրութիւնը չունէին , անոնց
 օրովը քաղաքի վրայ ազգային տուրքը ,
 արհեստաւորաց դասերը կը կանչէին իրենց
 լծակն մէջ , եւ իւրաքանչիւրէն բռնի կը պա-
 հանջէին 2 , 3 , եւ այլն քաղ . ինչպէս որ հին
 ժամանակը շատ բաներու մէջ զեղծումներ կ'ը-
 լային , այս ալ նոյն ժամանակին տեսակ մը
 զեղծումն էր որ ի գործ կը դրուէր : Բայց այ-
 սօրուան մեծ պէտքերը չկային հին առեւտուան
 ազգային կառավարութեան մէջ , ժամանակին
 հետ մէկտեղ վարչական գրութիւններն ալ
 փոխուեցան : Աւստի քանի որ այժմ ընդհանուր
 տուրք մը պիտի հաւաքուի , եւ իւրաքանչիւր
 ազգային պարտական է կ'ըսենք՝ մասնակցիլ
 այս տրոց , ինչ ընել պէտք է երբ չեն տար :
 Պարտք եւ իրաւունք զուգընթաց են կ'ըսենք .
 պարտքը տուրքի իրաւունքը վայելես պիտի
 ըսենք . սակայն իրաւունքներ կան՝ որ ամեն
 անհատ ունի , եւ եթէ տուգանքն ալ չվճարէ ,
 կը վայելէ նոյն իրաւունքները : Կան այնպիսի
 իրաւունքներ ալ՝ որ կրնան զլացուիլ . Հետե-
 ւաբար քանի որ իւր պարտքը վճարած առեւ-
 ըրոր իրաւունքները պիտի կրնայ վայելել ,
 յայտնի է թէ տուրքերնին ժամանակին չվճա-
 րողներուն թիւը միշտ վճարողներէն աւելի պի-
 տի ըլլայ : Ենթադրելով որ 10 հազար հոգի
 տուրք չենք տար ըսեն , եւ Ազգը բարոյական
 իշխանութիւն մըն է ըսելով զլանան իրենց
 տուրքը հատուցանել , ինչ պիտի ընենք . միթէ
 չեն պիտի կենան ժամանակին Վարչութիւնն ու
 Պատրիարքը . միթէ Պատրիարքարանի դռները
 պիտի գոցեն եւ չպիտի խորհին ասոր մէկ ճարը
 գտնելու Քանի որ օրէնք մը կը դնենք՝ տարակոյս
 չկայ թէ տարբերութիւն մը պէտք է տուողին եւ
 չտուողին մէջ . երբ ամեն մարդ գիտնայ թէ
 Պատրիարքարանը գործերնին ինկած առեւ-
 զանեալ տուրքերուն վրայ հարիւրին 10 աւելի
 պիտի առնուի , ընականաբար զրոգում մը կ'ըզ-
 գայ իւր տուրքը ժամանակին վճարելու :

Քիտողութիւն մըն ալ եղաւ թէ Պատրի-
 արքարանի հետ գործ ունեցողներէն միայն պի-
 տի առնուի յապագեալ տուրքը . իսկ գործ
 չունեցողներէն չպիտի կրնայ առնուիլ : Իրաւա-
 ցի է թէ պէտ այս առարկութիւնը , բայց առ
 այժմ ասկէ աւելի դարման մը չկրնար ըլլալ :
 Տուգանքը՝ որ զոմանս խրոնոցուց , սխալ ըմ-
 բռնուած ըլլալու է . վասն զի չը վճարողնե-
 րուն համար չենք ըսեր որ երթանք բռնու-
 թեամբ տուգանք առնուք . միայն թէ պայ-

մանաժամնին լրանալէն ետեւ անոնք որ ե-
 ոսմեսայ միջոց մ'ալ անցուցած են , կ'ուզեն
 քոթմէլ գան կ'ուզեն յոթմէլմէլ , պիտի առնուի
 տուգանքը . եթէ չափը շատ կ'երեւի , կրնայ
 չափաւորիլ . հերիք է որ բան մը սահմանուի
 տուրքը վճարողին եւ չվճարողին մէջ տարբե-
 րութիւն մը դնելու համար :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Ծրագրին վիճա-
 բանեալ յօդուածը կարգաւոր հակըցայ որ
 Պատրիարքարանի պէտքերը հոգալու նախան-
 ձախնդրութեամբ գրուած է այն . բայց կ'ու-
 ղեմ գիտնալ թէ մեր շինելիք Տրոց կանոնադ-
 րութեան մէջ կարող ենք տուգանք սահմանել
 առանց Տէրութեան հարցնելու :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ . — Այո . արդէն Պատ-
 րիարքական Պէրաթին ու Սահմանադրութիւնն
 այդ իրաւունքը տուած են . իսկ եթէ պատշաճ
 դատուի , Տրոց ծրագրին ամբողջապէս Տէրու-
 թեան կրնանք վաւերացնել տալ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ . — Հիմա Համարակալու-
 թեան գիւանէն ուրիշ կերպով խմբագրուած
 եկաւ այդ յօդուածը . որո՞ք բառն ալ վերցուած
 է , եւ անաւասիկ կը կարգամ զայն :

« 307 . 7 . Եթէ մէկը իր տարեկան տուրքը
 « մինչեւ նոյն տարուոյն վերջը եւ անկէ ետքն
 « ալ մինչեւ երեք ամիս վճարած չըլլայ , պար-
 « տական է իր անվճար արոց հետ՝ նոյն գու-
 « մարին հարիւրին 10 ալ աւելորդ վճարել :
 « Այս կարգի ազգայինք երբ քաղաքական գոր-
 « ծոյ մը համար Պատրիարքարան կամ Թաղա-
 « կան խորհուրդներուն զխմեն , նախ իրենց
 « այս պարտքը ամբողջ պիտի վճարեն , եւ ա-
 « պա իրենց գործը պիտի տեսնուի » :

ԶԱՅՆԵՐ . — Չենք ընդունիր , բառը թէ եւ
 վերցուած է , բայց սկզբունքը նոյն է :

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

(Աւելի կը տե՛րէ)

ԵԱՂՃԵԱՆ Օ. ԷՖ . — Տուգանք ըսուածը
 տէրութիւնը տակաւին չէ օրինադրած տրոց
 համար . մի թէ ուրիշ պատիժ չկայ : Այն որ
 իր պատիւը չը ճանչեր եւ ազգային պարտքը
 չվճարեր , հերիք է որ յակնաէ յանուանէ հրա-
 տարակուի լրագրաց միջոցաւ իր անպատիւ ըլ-
 լալը ճանչցուելու համար : Այս իսկ բաւական
 պատիժ է :

ԶԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :
 ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խմբագրութիւն չեղած

քուէի չգրուիր, պէտք է հարցնեմ. հիմա որչա՞ք բառը վերցուած է եւ անոր տեղ -- էլըրք բառը գործածուած. կ'ընդունիք:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Հարցմանդ ձեւին վրայ դիտողութիւն ունիմ: Տոյժ, որոշուած է եւ -- էլըրք բառերը կ'ընդունուին թէ չէ, այս պէտք է քուէի դնէք:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կարծեմ թէ բուն յօդուածն է քուէի գրուելիքը. թնչպէս բառը քուէի կը դնէք, չեմ հասկընար:

ՃԻԼԱՃԵԱՆ Պ. ԷՖ. — Փոխանակ տուրքը ժամանակին չվճարողաց վրայ տուգանք դնելու, ես կ'առաջարկեմ որ ժամանակին վճարողաց տուրքէն հարիւրին բան մը պակաս առնուին որոշուի:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկուելի ձեւը սա պիտի ըլլայ. հարիւրին 10 աւելորդ տուրք առնուիլը կ'ընդունուի թէ ոչ:

Անմիջապէս քուէի գրուելով, 10 ի դէմ 25 ձայնով ԶԸՆՊՈՒՆՈՒԵՑԱԻ հարիւրին 10 աւելորդ տուրք առնուիլ:

Հետեւապէս սոյն որոշման համեմատ եօթներորդ յօդուածին խմբագրութիւնը փոխուեցաւ սապէս.

«Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ Թաղական խորհուրդներուն դիւտոյ ազգայինէ մը տարին լրացած եւ երեք անգամ ուղղուած քայց տակաւին անվճար ձգուած «ու դիտուած տուրքերը պիտի առնուին», եւ «ետքը նոյն անձին գործը պիտի տեսուի»:

Յօդո՞ւմ 8

«Տուրքին տրուած ըլլալը պիտի հաստատուի վճարողին քովը գտնուած ընկալագրէն», «որ ստորագրեալ պիտի ըլլայ կեդրոնական «անտուկին գանձապահէն եւ հաւաքիչէն» եւ «թէ հաւաքիչ ձեռք է առնուած, եւ Պատրիարքարանի կնքով վաւերացեալ»:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Այս յօդուածին վրայ փոքր դիտողութիւն մ'ունիմ. տուրքին վճարուած ըլլալը վաւերացեալ ընկալագրէն պիտի հաստատուի կ'ըսէ. կարծեմ թէ պէտք է յաւելցնել նաեւ Պորթուգալացի անդամի որոշումը, որպէս զի եթէ ընկալագիրը կորուսանող ըլլայ, տուժարաց արձանագրութիւնէն հաստատուի:

ԵՆՆԱՐԱԿԱՆ Տ. ԷՖ. — Համարակալութեան դիւանը դիտողութիւն չընեմ այդ մասին:

Ութերորդ յօդուածին վրայ ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, քուէի գրուեցաւ, եւ Տ. Ամբրոսիոս վարդապետի առաջարկած յաւելուածովը ԸՆՊՈՒՆՈՒԵՑԱԻ:

Յօդո՞ւմ 9

«Պատրիարքարանի ազգահամարի գրասենեակը պարտաւորեալ է ըստ Սահմանադրութեան ամեն տարի Թաղական խորհուրդներէն ստուգել իրենց թաղին մէջ նոր եկողները եւ ուրիշ գալիւնները, զնացողները եւ ուր երթալին, նոր շահու տէր եղողները, իրենց տրոց աստիճանին փոփոխութիւն ուղղները եւ վերջապէս վախճանողներն ու «ձնունդները»:

ՃԻԼԱՃԵԱՆ Պ. ԷՖ. — Փորձառութիւն ունենալով քիչ շատ, գիտեմ որ ոչ մտաւորաբար ոչ բանական տեղեակ են այդ բաներուն, որոնց վրայ Տէրութեան կողմէ ալ հարկադրիչ օրէնք մը չկայ արդէն. ասոր համար Թաղական խորհուրդները պատասխանատու մի ընէք:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Ես ալ կ'առաջարկեմ որ Թաղական խորհուրդոց վրայ ոչ միայն պատասխանատուութիւն դրուի այս բանին համար, այլ եւ պատիժ կամ տուգանք մը անոնց համար սահմանուի եթէ զանցառութիւն ընող ըլլայ:

Իններորդ յօդուածին վրայ ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, քուէի գրուեցաւ եւ անփոփոխ ԸՆՊՈՒՆՈՒԵՑԱԻ:

Յօդո՞ւմ 10

«Տուրքը Վարչութեան կողմէ ընտրեալ «յատուկ հաւաքիչներու ձեռք պիտի հաւաքուի. հաւաքուած գումարին վրայ 5 էն մինչեւ 10 առ հարիւր իրենց տրուելով իբր ծախք «եւ վարձատրութիւն. իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի, որ եւ է ծախք «տեղի չը պիտի ունենայ»:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հարիւրին քանի հաւաքչական վարձ տրուելիքը Վարչութեան գիտնալիք բանն է, հոս որոշման սակ դնելն աւելորդ է. ինչու որ կրնայ ըլլալ որ մեր որոշածն արգելք ըլլայ տրոց հաւաքման:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. — Կրնայ Վարչութիւնը նորէն հոս բերել այդ մասը սրբագրուելու համար, եթէ արգելք մը պատահի:

ԿՈՍՏԱՆՆԻ Յ. ԷՖ. — Այս 10դ. յօդուածին վրայ նախորդ նիստին Քաղաքական ժողովոյ կողմէն պէտք եղած դիտողութիւնն ըրած եմ. նոյն դիտողութիւնը կրկնելու համար պէտք է որ նախորդ նիստի ատենագրութեան մէջէն կարգւած դրան. ահաւասիկ. «Ահա շփոթութեան շատն սակէ կը ծագի. ոմանք հաւաքչին կուտան եւ ոմանք գործով Պատրիարքարան եկած ատեն կը վճարեն. որ եւ իցէ «գցրծ մը եթէ երկու պատասխանատու ունենայ ոչ մէկն եւ ոչ միւսը չկրնար ըստ օրինի իւր պարտքը կատարել. ասոր համար Վարչութիւնը կ'ուղէ որ ընդհանուր հաւաքչի մը «միջոցաւ ըլլայ եւ նա պատասխանատու մը «նայ, եւ եթէ մէկը գործով Պատրիարքարան «եկած ատեն տուրքը վճարած չըլլայ, հաւաքչին զրկել» որ վճարելէ ետեւ տոմսակն «առնէ եւ այնպէս ներկայանայ»:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կոստանդ էֆէնտիին դիտողութիւնը քիչ մ'առաջ վիճարանեալ 7դ. յօդուածին պարունակութեան հակադարձն է. գործով Պատրիարքարան եկողներն իրենց անագանեալ տրոց հատուցման ատեն տուգանք մ'ալ պիտի տային. այդ տուգանքը վերցաւ ժողովին որոշմամբ. այժմ գործով եկողներէն հաւաքեալ գումարէն կեդրոնական սրնտուկը տուգանք մը պիտի տայ հաւաքչին, եւ թէ ժողովն այդ առաջարկութիւնն ընդունի. մինչդեռ հաւաքչին աշխատութիւն մ'ունեցած չէ, Աղէկ կ'ըլլայ որ հաւաքչին իւր հաւաքած գումարէն առնէ իւր վարձը, եւ Վարչութիւնն այս մասին զանի գոհ ընել ջանայ. ուստի Համարակալութեան դիւանին առաջարկութիւնը ընդունելի կը դատուի:

ԿՈՍՏԱՆՆԻ Յ. ԷՖ. — Սխալ ըմբռնում կայ այս մասին, զոր հարկ կը համարիմ ուղղել. հաւաքչին երբ հարիւրին 10 էն տեսնելու ըլլայ թէ այսքան հազար դրոշ պիտի առնու, ըստ այնմ տուրքերն հաւաքելու ետեւէ կ'ըլլայ. եթէ այսպէս չըլլայ հաւաքչի չկրնար գիտնալ իւր հաւաքածը, եւ հաւաքման գործը կը դժուարանայ եւ կը շփոթի. պէտք է որ որոշ ըլլայ եւ ամեն մարդ գիտնայ թէ որոշ պիտի վճարուի տուրքը, ասոր համար պատուաւոր եւ երաշխաւորեալ հաւաքչի մը ձեռք միայն պէտք է ըլլայ այս գործը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կոստանդ էֆէնտիին ըսածէն կը հետեւի որ հաւաքիչ անունով մէկը պիտի գտնուի եւ Պատրիարքարանի մէջ հաւաքուածէն ալ տասանորդ պիտի առնէ, ըսել է թէ անիկա հաւաքէ կամ հաւաքէ, տասանորդ պիտի առնէ իբրեւ յոյս. Հաւաքիչ ըսուածը միայն իւր հաւաքածին տասանորդը պէտք է առնէ իբրեւ իւր աշխատութեան վարձը. իսկ Պատրիարքարանի մէջ առնուած տուրքէն որեւէ տասանորդ հարկ չէ սալ անոր, որ այդ հաւաքման մէջ աշխատութիւն մ'ունեցած չէ, Պատրիարքարանի մէջ ամսականաւոր պաշտօնեայք կան արդէն. անոնք այդ ծառայութիւնն ալ կրնան ընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբր երեսփոխան կ'առաջարկեմ որ հաւաքչին համար հարիւրին 5 կամ 10 որոշ թիւ մը ցուցնելն աւելորդ է եւ պէտք է վերնայ ծրագրին մէջէն. Վարչութեան ըստ բաւական է: Թէ որ ուրիշ դիտողութիւն չը կայ, իմ առաջարկած բարեփոխութեամբ 10դ. յօդուածը քուէի պիտի դնեմ:

Հետեւապէս քուէի գրուելով 10դ. յօդուածը, Ատենապետ էֆէնտիին առաջարկած բարեփոխութեամբն ԸՆՊՈՒՆՈՒԵՑԱԻ եւ փոխուեցաւ սապէս.

«Տուրքը Վարչութեան կողմէ ընտրեալ եւ «վարձատրեալ յատուկ հաւաքչիներու ձեռք «պիտի հաւաքուի. իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի, որեւէ ծախք տեղի «չը պիտի ունենայ»:

Յօդո՞ւմ 11

«Չանաղան տեղեր պանդխտող ազգայինն «ընտանեօք բնակութիւն հաստատած տեղին «ազգային անտուկին կը վճարէ իր տարեկան «տուրքը»:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ասկէ առաջ գըրաւոր առաջարկութիւն մը մատուցանելով դիտողութիւն յայտնած էի որ գաւառացին Պօլսոյ մէջ իւր սահմանադրական իրաւունքը չվայելեր եւ պարտուց կը մասնակցի: Այժմ գոհ եմ տեսնելով որ իմ այս դիտողութիւնն անկատողութեան առնուելու եւ օրինաց կարգ անցեր է յատուկ յօդուածով մը. ըսել է որ այսուհետեւ պանդխտ գաւառացին գործով Պատրիարքարան կամ Թաղական խորհուրդներուն գիմած ատեն ազգային տուրք չպիտի վը-

ճարէ . այլ իւր ընտանեաց բնակութիւնն ուր որ հաստատած է , այն տեղւոյն միայն պարտական պիտի մնայ :

Մետասաներորդ յօդուածին վրայ ուրիշ գիտողութիւն ընող չըլլալով , քուէի գրուեցաւ եւ անփոփոխ ընդնորմով :

Յօդ 12

« Գաւառներու կողմէն կեդրոնական սըն . « տուկին տրուելու տուրքը , Ազգային ժողոպոյ կողմէն պիտի սահմանուի , երբ գաւառական սնտուկներուն իրենց համար հաւաքած տրոց քանակութիւնն իմացուի , եւ այն « ատեն ամեն տարի գաւառական վարչութիւնք « պիտի ղրկեն զայն ի Պատրիարքարան փոխա . « նակ ընկալազիրներ ընդունելով կեդրոնա . « կան սնտուկի գանձապահէն ստորագրեալ եւ « Տնտեսական խորհրդոյ եւ Պատրիարքարանի « կնիքներով վաւերացեալ » :

ԱՍՁԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Այս յօդուածն ոչ այս սարի եւ ոչ գալիք տարիներն կրնայ գործադրուիլ , քանի որ գաւառները պիտի որոշեն իրենց հաւաքելիք տուրքերը . գաւառները երբ որէնք պիտի դնեն եւ տրոց բաշխուին ընեն եւ կեդրոնական վարչութեան իմաց տան եւ կեդրոնն ալ ըստ այնմ իւրաքանչիւրին իրենց կեդրոնական սնտուկին տալիքը պիտի որոշէ . տասնեւհինգ տարի է Սահմանադրութեան հաստատութիւնը դեռ Պօլիս այսօր կ'որոշէ տրոց ծրագիրը եւ նորա գործադրութիւնը . ուստի հոս յաւելցնել պէտք է որ հիմակու հիմա գաւառներուն կողմէն կեդրոնական սնտուկին ի վաղուց յատկացած սովորական տուրքերը շարունակուին ինչպէս էր ցարդ , մինչեւ ցնոր տնօրէնութիւն . ապա թէ ոչ կեդրոնական սընտուկին տարեկան հարիւր հազար զրուշի հարուած մը կուտանք :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ.— Տեաք իմ , գիտէ՞ք ինչու գրուած է այս յօդուածը . որովհետեւ վարչութիւնն իւր ծրագրին մէջ ըսած էր թէ Ազգային ժողովիս գործն է սահմանել գաւառներուն կողմէն կեդրոնական սնտուկին տրուելու տուրքը . Համարակալութեան զիւանը գաւառական ազգային տրոց խնդիրը զոր վարչութիւնն իւր ծրագրին մէջ անցուցած էր , դուրս ձգել ուզեց . եւ ինչպէս Քրիստոստոսը էֆէնտին ըսաւ , քանի մը տարիէն հաղիւ կըրնայ ըլլալ , ասոր համար դուրս ձգուեցաւ , եւ

այս յօդուածը գրուեցաւ . եւ եթէ լաւ ուշագրութիւն ըլլայ , այս յօդուածէն այն իմաստը չեղնելիք է գաւառական հարկի տուրքը պիտի գազրի . այլ գաւառներէն այդ տուրքն առնուելու կերպին վրայօք տրամադրութիւն մ'է միայն : Իսկ ժողովն եթէ աւելի բացատրութիւն մը դնել հարկ կը տեսնէ , Համարակալութեան զիւանն ընդդիմութիւն մը չընելը այդ մասին :

ՉԱՅՆԵՐ.— Այո , պէտք է պարբերութիւն մը յաւելցնել :

ԱՍՁԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Գաւառական հարկի տուրքն ինչպէս որ ըսիք , մինչեւ որ Ազգային ժողովէն սահմանուի , հինը պիտի շարունակէ . նոյնպէս ալ ազգային սնտուկը շատերէ երեք չորս տարուան զիջուած 75 զրուշի թեր հաշիւ տրոց առնելիքներ ունի . եթէ նոր տուրքը սահմանուելու ըլլայ , այդ առնելիքները փճանալու չեն . այլ պէտք է որ այն մնացածներն ալ պահանջուին :

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ.— Երբ երեսփոխան զիտողութիւն մ'ունիմ . այս յօդուածը 10 տողէն աւելի կը պարունակէ մէկ իմաստ յայտնելու համար , մինչդեռ քանի մը տողով կրնայ լմընալ . միայն սն ըսել պէտք է « Գաւառներու « կողմէն կեդրոնական սնտուկին տրուելու տուրքը մինչեւ որ Ազգային ժողովը սահմանէ , գաւառները հինը պիտի շարունակեն վճարել » :

Երկտասաներորդ յօդուածին վրայ ուրիշ գիտողութիւն չըլլալով , քուէի գրուեցաւ , եւ Ատենապետ էֆէնտինն առաջարկած բարեփոխութիւնն ընդնորմով :

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ.— Երբայրին 12 յօդուածները լմընցան , ըսել է՝ Տրոց խնդիրն ալ վերջացաւ . իսկ այսպիսի օրինական խնդրոյ մը համար ծրագրին բովանդակութեանը վրայ վերջնական քուէարկութիւնը շարաթ մը միջոցաւ կամ յաջորդ նիստին կ'ըլլայ . այսու ամենայնիւ երբ սովորականութիւն ունենայ կըրնայ ըստ կանոնի միեւնոյն նիստին վերջին քուէարկութիւնն ալ ըլլալ . պիտի հարցնեմ ժողովին թէ կ'ուզէ վերջնական քուէարկութիւնն ալ այսօր ընել , եւ թէ կայ մի զիտողութիւն ընող բովանդակութեանը վրայ :

ԲԱՁՄԱԹԻ ԶԱՅՆԵՐ.— Այո , այո , վերջ-

նական քուէարկութիւն կ'ուզենք , զիտողութիւն չունինք :

Խօսք խնդրող չըլլալով , Ատենապետ էֆէնտի կը պատրաստուի : վերջնական քուէի դնել Տրոց սրբազրեալ ծրագիրը . որոյ պատճէնն ահաւաստիկ .

ԿԱՆՈՆ ԱՒՐՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՑ

1. Ամեն ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակի ու շահու տէր եւ իւր բնակութիւնը Պօլիս հաստատած պարտական է կեդրոնական սնտուկին տարեկան տուրք մը տալու :

2. Ազգային տուրքը ութն աստիճանի բաժնուած է .

Ա.	500 զրուշ որոշեալ՝	և աւելորդն իբրեւ նուէր .
Բ.	300 "	
Գ.	200 "	
Դ.	150 "	
Ե.	100 "	
Զ.	75 "	
Է.	50 "	
Ը.	25 "	

3. Տրոց բաշխումը կատարելու համար ամեն թաղական խորհուրդ իւր մէջէն եւ դրսէն այս մասին յարմարութիւն ունեցող անձինքներէ բաղկացեալ Յանձնաժողով մը կը կազմէ , որն որ կը հրաւիրէ նոյն թաղին մէջ բնակութիւն հաստատող եւ տուրք տալու կարողութիւն ունեցող ազգայինները եւ հետերնին համահաճութեամբ կ'որոշէ տալու տուրքին որքանութիւնը . զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայինն իւր ստորագրութեամբ :

4. Յիշեալ Յանձնաժողովը 15 օր պայմանաժամ կու տայ իւրաքանչիւր ազգայնոյ ի խորհրդարան ներկայանալու համար . եւ պայմանաժամուն լրանալէն ետքը չներկայացողներուն իրենց աստիճանին համե-

մատ վճարելու տուրքին քանակութիւնը Յանձնաժողովը կ'որոշէ եւ մասնաւոր նա մակաւ իրեն կը հաղորդէ . որ եթէ զիտողութիւն մ'ունի , 15 օրուան մէջ հաղորդէ Յանձնաժողովին . այս պայմանաժամը լրանալէն ետքը , եղած զիտողութիւնները չպիտի ընդունուին այն տարուան համար :

5. Տարեկան տուրքն երկու անգամով կը վճարուի , վեց ամիսն անգամ մը . ու զորն ազատ է անմիջապէս մէկ անգամէն ալ վճարել ամբողջ տարեկանը :

6. Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ թաղական խորհուրդներուն դիմող ազգայինէ մը տարին լրացած եւ երեք անգամ ուղուած բայց տակաւին անվճար ձգուած ու դիզուած տուրքերը պիտի առնուին , եւ ետքը նոյն անձին գործը պիտի տեսնուի :

7. Տուրքին տրուած ըլլալը պիտի հաստատուի Պատրիարքարանի սնտուկի տու մարաց արձանագրութեանէն , եւ վճարողին քովը գտնուած ընկալագրէն , որ ստորագրեալ պիտի ըլլայ կեդրոնական սնտուկին գանձապահէն եւ հաւաքիչէն՝ եթէ հաւաքիչ ձեռօք է առնուած , եւ Պատրիարքարանի կնքով վաւերացեալ :

8. Պատրիարքարանի ազգահամարի գըրասենեակը պարտաւորեալ է ըստ Սահմանադրութեան ամեն տարի թաղական խորհուրդներէն ստուգել իրենց թաղին մէջ նոր եկողները եւ ուրկէ գալերնին , գնացողները եւ ուր երթալնին , նոր շահու տէր եղողները , իրենց աստիճանին փոփոխութիւն ուղղութիւնը եւ վերջապէս վախճանողները եւ ծնունդները :

9. Տուրքը վարչութեան կողմէ ընտրեալ եւ վարձատրեալ յատուկ հաւաքիչներու ձեռօք պիտի հաւաքուի . իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի , որ եւ է ծախք տեղի չպիտի ունենայ :

10. Չանաղան տեղեր պանդխտող ազ-

գայինն ընտանեօք բնակութիւն հաստա- տած տեղին ազգային սնտուկին կը վճարէ իր տարեկան տուրքը :

11. Գաւառներու կողմէն կեդրոնական սնտուկին տրուելու տուրքը մինչև որ Ազգային Ժողովը սահմանէ, գաւառները հինը պիտի շարունակեն վճարել :

Ատենապետ էֆէնտին կը հրաւիրէ զատենա- գպիր էֆէնտին անուանական կոչմամբ երես- փոխանաց քըւէն ընդունիլ :

Այս միջոցին 43 ներկայ երեսփոխաններէն 8 երեսփոխան ժողովարանէն մեկնած ըլլալով քըւէի ջմանակցեցան, որք են .

Էսաեան	Մ.	էֆէնտի
Խաչիկեան	Կ.	»
Կրճիկեան	Յ.	»
Մամիկոնեան	Մ.	»
Մանուկեան	Ս.	»
Նորատունկեան	Յ.	»
Պերեան	Կ.	»
Տիլէեան	Մ.	»

Մնացեալ 37 երեսփոխանաց քըւէները միաձայնութեամբ ԱՅՈ կամ ընդունելութիւն յայտնեցին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Վարչութեան բերած տրոց ծրագիրը արժան դատուած սըր- բագրութիւններէ ու բարեփոխութիւններէ ետ- քը՝ սահմանադրական բառով ըսեմ՝ իբրեւ կա- նոնադրութիւն կեդրոնական ընդհանուր տրոց Ազգային Ժողովը ԸՆԴՈՒՆԵՑ . եւ Նախագահ

Սրբազանն ու Գիւանն ստորագրելով զայն պի- տի յանձնեն Վարչութեան ի գործադրութիւն :

Ատենի փակման ժամը հասած ըլլալով, Օ- րակարգին միւս խնդիրները մնացին . եւ յա- ռաջիկայ նիստին համար Ատենապետ էֆէնտին խօսքը Նախագահ Սրբազանին տուաւ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ազգային Ժողովոյ մեծապատիւ անդամոց կը ծանուցանեմ որ այ- սօր 1874 ամի բացման նիստերուն վերջինն ըլլալով կը փակուի, եւ յառաջիկայ Մայիսի ա- ռաջին եօթնեկէն մէջ՝ այն է Մայիս 2 ին պի- տի բացուի ըստ կանոնադրութեան : Այս առ- թիւ իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ այն ազգասիրութեան եւ միաբանութեան համար, որով աշխատեցաք Ազգային Ժողովը իւր ան- կանոն վիճակէն բարեկարգական նոր վիճակի մը վերածել . եւ կը մաղթեմ որ յառաջիկայ բացումին բազմապատկին ձեր ազգասիրական եռանդն ու ջանքերը :

Կը շնորհաւորեմ նաեւ ձեր այսօրուան ո- ռոշումը, որով կեդրոնական ընդհանուր տրոց խնդիրը պսակեցիք . կը շնորհաւորեմ, վասն զի 12 տարիէ ի վեր կեդրոնական տրոց օրէնք մը հաստատելու համար թափուած տաժանելի եւ անյաջող ճգանց արդիւնաւոր վախճան տալու յաջողեցաք դուք այսօր :

Յանուն Ազգին շնորհակալ եմ :

Ատենը փակուեցաւ ժամը 10 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՅ
ԱՏԵՆԱՊԵՏ ԹՈՒՍԱՆԱՆ

Յ Ա Ն Կ Խ Ն Դ Ր Ո Ց

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Ց

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Սահմանադրական ուխտ նորընտիր Պատ- րիարքի :

2. Ընտրութիւն Մայր դիւանի :

3. Ընտրութիւն Կրօնական Ժողովոյ :

4. Կանոնադրութիւն Ազգային Ժողովոյ :

5. Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց :

6. Ամբողջացում Քաղաքական Ժողովոյ :

7. Ընդունելութիւն հին ատենադրութեանց :

8. Փոփոխելի տրամադրութիւնք Սահմա- նադրութեան . — Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագիրը :

ՎԻՃԱԿ ԽՆԴՐՈՑ

Ա. Նիւր, 8 յուլի 1874, Ա.Բ.Ն. Տ. Ներսէս Ս. Պարթևրէ Կարթէր Կարթէր :

Գ. Նիւր, 21 յուլի 1874, Ընդունեցաւ :

Զ. Նիւր, 18 հուլի 1874, Իրաւաւորեցաւ :

Ը. Նիւր, 8 յուլի 1874, Լաւ արդիւնեցաւ : ԱՌԱՐՏԵԱԼ

Դ. Նիւր, 5 յուլի 1874, Ընդունեցաւ :

ԱՌԱՐՏԵԱԼ

Ե. Նիւր, 4 հուլի 1874, Ժողովը ընդունեցաւ : ԱՌԱՐՏԵԱԼ

Ե. Նիւր, 4 հուլի 1874, Օրակարգին անցաւ :

Է. Նիւր, 25 հուլի 1874, Կազմութեան անցաւ :

Ժ. Նիւր, 6 օգոստոս 1874, Իրաւաւորեցաւ : ԱՌԱՐՏԵԱԼ

Զ. Նիւր, 18 հուլի 1874, Օրակարգին անցաւ :

Թ. Նիւր, 22 յուլի 1874, Իրաւաւորեցաւ : ԱՌԱՐՏԵԱԼ

Է. Նիւր, 25 հուլի 1874, Օրակարգին անցաւ :

Թ. Նիւր, 22 յուլի 1874, Ընդունեցաւ : ԱՌԱՐՏԵԱԼ

Ը. Նիւր, 8 յուլի 1874, Ներսէս-Ներսէս Կարթէր Կարթէր :

ԺԲ. Նիւր, 17 յուլի 1875, Կարթէր Կարթէր Կարթէր : ԱՌԱՐՏԵԱԼ

9. Տեղեկագիր Գանձնաժողովոյ կաթուղի-կոսական կոնդակի (Սոսյ կաթուղիկոսական խնդրոյն վրայ) :

10. Առաջարկութիւնք Իւթիւճեան, Պէկեան եւ Իփէկճեան էֆէնտիներու՝ կանոնադրութեան վերաքննութեանը վրայ :

11. Տեղեկագիր Եկեղեցական Համագումար ժողովոյ ի վերայ Աղթամարայ կաթուղիկոսութեան խնդրոյն :

12. Հարցումն Իփէկճեան էֆէնտի առ նախորդ կրօնական ժողովն :

13. Պատճառարանեալ հրաժարագիր Առաքել պէյի Տասեան :

14. Տասն առաջարկութիւնք Իփէկճեան էֆէնտիի :

15. Նուիրատուութիւնք Աբրահամ փաշայի եւ Սարգիս պէյի, մնացորդ հին պարտուց բարձման համար :

16. Համարատուութիւն Գաղաքական ժողովոյ 1870—71 ամի : Համարատուութիւնք Ուս. եւ Տես. Խորհրդոց եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեան :

Եւրոպական Ժողովոյ լեւոնականութեան հանձնարարութիւնը (1) : ՕՐԱԿԱՐԳ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Զեւնականութեան և Իրաւականութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

ԺԱ. Նիւստ, 20 Դեկտ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

ԺԶ. Նիւստ, 21 Դեկտ. 1875, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Զեւնականութեան և Իրաւականութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Օրհնագրութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ
Թ. Նիւստ, 22 նոյեմ. 1874, Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Ը. Նիւստ, 8 նոյեմ. 1874, Իրաւականութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

ԺԱ. Նիւստ, 20 Դեկտ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Թ. Նիւստ, 22 նոյ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Թ. Նիւստ, 22 նոյ. 1874, Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

(1) Սոսյ խնդրոյն վրայ խօսք առած են Իփէկճեան էֆ. Տէր Մատթէոս վ. և Գ. Ղազարոսեան՝ Ռուսիոյ Կանն Երանգազեան Ն. էֆէնտիները :

17. Համարատուութիւն Գաղաքական ժողովոյ 1872—73 ամի :

18. Համարատուութիւն կրօնական եւ Գաղաքական Խառն ժողովոյ 1872—73 ամի :

19. Ընթերցում եւ արձանագրութիւն անցեալ սեպտեմբեր 28 ի նիստին վերաբերեալ բողոք թղթոց :

20. Առաջարկութիւն Ալեքսանեան էֆէնտիի գաւառացի ազգայնաց ի Պօլիս տուրք տալուն վրայ :

21. Առաջարկութիւն Գ. Ղազարոսեան էֆէնտիի՝ կանոնադրութեան վերաքննութեանը վրայ :

22. Առաջարկութիւն Իփէկճեան էֆէնտիի՝ հին պարտուց արդէն վճարեալ մասին շնորհակալութեան քուէ տալու համար :

23. Առաջարկութիւն Նախագահ Սրբազանի վասն շինութեան ժողովարանի :

24. Առաջարկութիւն Նախագահ Սրբազանի վասն Մուրատեան վարժարանին փարիզու :

25. Քննութիւն ազգային նախընթաց անցից (ըստ 6 առաջարկութեանց Իփէկճեան էֆէնտիի) :

26. Գ. առաջարկութիւն Իփէկճեան էֆէնտիի՝ ժողովրդային հանրագրութեանց վրայ :

Թ. Նիւստ, 22 նոյ. 1874, Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

Թ. Նիւստ, 22 նոյ. 1874, Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

Թ. Նիւստ, 22 նոյ. 1874, Օրհնագրութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ
Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Ընթերցում և յայտարարութեան : ԱՌԱՐՑԵԱԼ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Երանգազեան էֆէնտիի վերաբերեալ Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

ԺԶ. Նիւստ, 21 Դեկտ. 1875, Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Երանգազեան էֆէնտիի նոյն ժամանակէ համարատուութեանը : ՕՐԱԿԱՐԳ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ և Նախնական Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Սըրբազանին յանձնարարութեան յիշատակով : ՕՐԱԿԱՐԳ

Ժ. Նիւստ, 6 Դեկտ. 1874, Գեղեցիկ Գործակալ և կառավարչութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

ԺԶ. Նիւստ, 21 Դեկտ. 1875, Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

ԺԱ. Նիւստ, 20 Դեկտ. 1874, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ Եւրոպական Ժողովոյ Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

ԺԲ. Նիւստ, 17 յունիս 1875, Քննութեան Գեղեցիկ Գործակալ : ՕՐԱԿԱՐԳ

ԺԱ. Նիւստ, 20 Դեկտ. 1874, Օրհնագրութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

ԺԵ. Նիւստ, 7 Դեկտ. 1875, Ժողովուրդի Կրթութեան Գեղեցիկ Գործակալ : ԱՌԱՐՑԵԱԼ

27. Ժ. անաջարկութիւնն իֆէկճեան էֆէնտիի ընտրողաց մեծ մասին ձեռնպահութեանը վրայ :

ԺԱ. Նիւր, 20 րեկոյ. 1874, Նախ-Յեռն-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

28. Անաջարկութիւնն Ք. Ղազարոսեան էֆէնտիի վասն ընթերցման կայսերական Պէրաթի Պատրիարքական հաստատութեան :

ԺԱ. Նիւր, 20 րեկոյ. 1874, Օր-Իւրքին առնաւ :

ԺԲ. Նիւր, 17 յունիս. 1875, ընթերցումը կարգուեցաւ : ԱՆԱՐՏԵԱԼ

29. Անաջարկութիւնն Ք. Ղազարոսեան էֆէնտիի նախորդ վարչութեան ճիւղերուն պակաս մնացած համարատուութեանց համար :

ԺԱ. Նիւր, 20 րեկոյ. 1874, Մ. Դիւանը իւրեք շաբաթուրդ Սրբաշնչին առնալ ճիւղեցէլ րուլ :

ԺԲ. Նիւր, 17 յունիս. 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին Օր-Իւրքին առնաւ (1) : ՅԳԵԱԼ

30. Համարատուութիւնն կրօնական ժողովոյ 1872—74 ամաց :

ԺԱ. Նիւր, 20 րեկոյ. 1874, Ձեռնհաս-Յեռն րեռնին յընեցաւ : ՅԳԵԱԼ

31. Համարատուութիւնն Վանօրէից խորհրդոյ 1872—74 ամաց :

ԺԱ. Նիւր, 20 րեկոյ. 1874, կարգուեցաւ րեռնին յընեցաւ :

ԺԲ. Նիւր, 17 յունիս. 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին Օր-Իւրքին առնաւ (1) : ՕՐԱԿԱՐԳ

32. Պատճառաբանեալ հրաժարագիր Այվատեան Մատթէոս էֆէնտիի :

ԺԲ. Նիւր, 17 յունիս. 1875, Իր-Աստ-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

33. Անաջարկութիւնն Իւթիւճեան էֆէնտիի հրաժարող երեսփոխանաց համար :

ԺԲ. Նիւր, 17 յունիս. 1875, Նախ-Յեռն-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

34. Մրագիր կանոնադրութեան կեդրոնական ընդհանուր տրոց (Քաղաքական ժողովէն առաջարկեալ) :

ԺԳ. Նիւր, 31 յունիս. 1875, Համար-Իւրքին րեռնին յընեցաւ և Օր-Իւրքին առնաւ :

ԺԵ. Նիւր, 7 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին հաս-Յեռն ժողովն ընտրեց ճիւղեցէլ րուլը :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, ժողովն ընտրեց րեռնի կանոնադրութեանը : ԱՆԱՐՏԵԱԼ

35. Անաջարկութիւնն Մարգարեան էֆէնտիի Սահմանադրութեան ինչ ինչ յօդուածոց բարեփոխութեանց համար :

ԺԳ. Նիւր, 31 յունիս. 1875, Նախ-Յեռն-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

(1) Սոյն խնդրոյն վրայ խօսք առած են Իֆէկճեան և Փափազեան Ս. էֆէնտիները :

36. Անաջարկութիւնն Իւթիւճեան էֆէնտիի և երեսփոխանաց ոմանց՝ նոր վերաքննիչ յանձնաժողով մը կազմելու համար :

ԺԳ. Նիւր, 31 յունիս. 1875, Նախ-Յեռն-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

37. Անաջարկութիւնն կրօնական էֆէնտիի և երեսփոխանաց ոմանց՝ երեսփոխանական ընտրութեանց արդի վիճակին վրայ :

ԺԳ. Նիւր, 31 յունիս. 1875, Նախ-Յեռն-Յեռն րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

38. Անաջարկութիւնն Երեսփոխան էֆէնտիի յառաջիկայ սահմանադրական տարեգլխի առթիւ թէ պակաս մնացած և թէ վիճակաւ դադրած երեսփոխանաց տեղ նոր ընտրութեանց համար :

ԺԳ. Նիւր, 31 յունիս. 1875, Մ. Դիւանն Պար-ճիւղի Սրբաշնչին և Քաղաքական ժողովոյ սոյն ճիւղին առնալ րեռնի-ճիւղին յընեցաւ Մ. Դիւանին : ՕՐԱԿԱՐԳ

39. Աղերսագիր Լեւոնեան էֆէնտիի ազգային փոխառութեան մը համար :

ԺԳ. Նիւր, 21 րեկոյ. 1875, Վարչ-Յեռն յընեցաւ : ԱՆԱՐՏԵԱԼ

40. Աղերսագիր Սրբանձտեանց Տ. Գարեգին վարդապետի՝ Վանօրէից խորհրդոյ համարատուութեան տեղեկագրին վրայ :

ԺԳ. Նիւր, 21 րեկոյ. 1875, Յար-ճիւղին րեռնին յընեցաւ :

ԺԶ. Նիւր, 21 րեկոյ 1875, սոյն րեռնին էլիւթ րեռնի-ճիւղին առանդեցաւ Մ. Դիւանին : ՊԱՏՐԱՍ

41. Աղերսագիր պանդուխտ Մշեցոց՝ Խըրիմեան Սրբազան, Սրբանձտեանց և Ազուանեան վարդապետներն Մշոյ մէջ պաշտօնէ դադրեցուցուած ըլլալուն համար շնորհակալութիւն յայտնելով Պատրիարք Սրբազանին և վարչութեան :

ԺԵ. Նիւր, 7 րեկոյ 1875, Վարչ-Յեռն յընեցաւ : ԱՆԱՐՏԵԱԼ

Ազգային Ժողովոյ 1874 ամի բացման խնդրոց կարգի Տումարէն քաղեալ սոյն ընդհանուր Յանկէն կը տեսնուի որ Ազգային Ժողովոյ ներկայացեալ են 41 խնդիրք, որք հետեւեալ վիճակն ստացած են .

20	Խնդիրք	ԱՆԱՐՏԵԱԼ
2	"	ՕՐԱԿԱՐԳ
8	"	ՊԱՏՐԱՍ
2	"	ՕՐԱԿԱՐԳ
9	"	ՅԳԵԱԼ
41		

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտի
գրառումը

Հայկական հանրագիտություն համալսարանի անվան
Հայաստանի պատմության և հնագիտության ինստիտուտ
1978 թ. հունիսի 15 համարի 12-րդ գրառումը

1978	12
1977	8
1976	2
1975	0
1974	11

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորեն	Եպիսկոպոս	Նար-պէյ	ԱՅՆԱԳՅՏ
2. Տ. Խորեն	Վ.	Կիրոյեան	ԱՅՆԱԳՅՏ
3. Տ. Ամբրոսիոս	»	Իսկէնտէրեան	
4. Տ. Գէորգ	»	Դերձակեան	
5. Տ. Զաքարիա	»	Զիւմրիթճեան	
6. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
7. Տ. Յովհաննէս	»	Փափաղեան	
8. Տ. Ներսէս	»	Ասլանեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խասգիւղի	
13. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդանէս	»	Միջագիւղի	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՅՆԱԳՅՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՅՆԱԳՅՏ
3. Աբրահամ	Հարենց	»	
4. Ասափա	Իկիտպաշեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Խսեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամաճեան	»	
10. Սարգիս	Աբրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ՄԱՐԿ ԳՐԱՆԻՑ

1. Յ. Երկր	1. Յ. Երկր
2. Յ. Երկր	2. Յ. Երկր
3. Յ. Երկր	3. Յ. Երկր
4. Յ. Երկր	4. Յ. Երկր
5. Յ. Երկր	5. Յ. Երկր
6. Յ. Երկր	6. Յ. Երկր
7. Յ. Երկր	7. Յ. Երկր
8. Յ. Երկր	8. Յ. Երկր
9. Յ. Երկր	9. Յ. Երկր
10. Յ. Երկր	10. Յ. Երկր
11. Յ. Երկր	11. Յ. Երկր
12. Յ. Երկր	12. Յ. Երկր
13. Յ. Երկր	13. Յ. Երկր
14. Յ. Երկր	14. Յ. Երկր

Գ Ի Ն Զ Գ Ր Ա Ն Ը

1. Յ. Երկր	1. Յ. Երկր
2. Յ. Երկր	2. Յ. Երկր
3. Յ. Երկր	3. Յ. Երկր
4. Յ. Երկր	4. Յ. Երկր
5. Յ. Երկր	5. Յ. Երկր
6. Յ. Երկր	6. Յ. Երկր
7. Յ. Երկր	7. Յ. Երկր
8. Յ. Երկր	8. Յ. Երկր

Կը ճախոշի ի Գիշանառան Պարտիսրարանի, և Ղալարիոյ Ս. Լուսաւորի Եկեղեցոյ բանկայր և Հայ գրախաձառնաց քոյ:

1. Յ. Երկր	1. Յ. Երկր
2. Յ. Երկր	2. Յ. Երկր
3. Յ. Երկր	3. Յ. Երկր
4. Յ. Երկր	4. Յ. Երկր